

# ՄԱՐԱՆԻ

Ի. ՏԱՐԻ ԹԻ 45 (1345) ՀԱՐԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 15, 2007  
VOLUME 27, NO. 45 (1345) SATURDAY, DECEMBER 15, 2007

## Պաշտօնաթերթ՝

**MASSIS** Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104

ՀՐԱՆԴ ՏԻՒԶ  
ՀՈՉԱԿՈՒԵՑԱՒ  
ԱՇԽԱՐՅԻ ՄԱՍՈՒԼԻ  
ԱՅԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍ



Հրանդ Դիմ

Պոլսոյ «Ակօս» թերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Տինք Մամուլի Միջազգային ինստիտուտի կողմէ արժանացած է Աշխարհի մամուլի ազատութեան հերոսի կոչումին:

«Ֆրանսակիրես» լրատուական  
գործակալութեան փոխանցմամբ,  
Դեկտեմբեր 10-ին Վիեննայի մէջ  
կայացած հանդիսաւոր արարողու-  
թեան ընթացքին Մամուլի Մի-  
ջազգային ինսալիտուտի տնօրիէն  
նոհան Ֆրիցի կողմէ մըցանակը  
յանձնուած է Տինքի ալրիին՝ Ռա-  
քէլ Դինքին:

«Հրանդ Տինքի հոչակումը Աշխարհի Մամուլի Ազատութեան 52-րդ Հերոս, յարգանքի տուրք է անոր խիզախութեան, ինչպէս նաև թուրքիոյ մէջ խօսքի եւ մամուլի ազատութեան անոր նշանակալի նպաստի ճանաչում», - յայտարարած է Ֆրից։ «Հրանդ Տինքի սպանութիւնը զրկեց թուրքիան իր առաւել խիզախ եւ անկախ ճայներէն մէկէն, այդ ահաւոր իրադարձութիւն էր թուրքիոյ մէջ մամուլի ազատութեան համար առհասարակ»։

2007 թուականի սկիզբէն մինչեւ օրս, աշխարհի մէջ ապաննուածէ առնուագն 91 լրագրող:

ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՇԹԱԽՈՅՑ

Երեւանի մէջ լոյս տեսնող «Առաջարկ» օրաթերթը համագործակցաբար APR groupը կերպութեան հետ, Նոյեմբեր 28-էն Դեկտեմբերի 1-ի միջեւ հեռախոսային հարցախոյզ մը կատարած է՝ 663 երեւանցիններու մասնակցութեամբ:

|                             |        |
|-----------------------------|--------|
| «Երէ ընտրութիւնները         |        |
| տեղի ունենային յառաջիկայ    |        |
| կիրակի օրը, որուն կու տայիք |        |
| ձեր ձայնը», այս հարցումը    |        |
| տուածէ հետեւեալ արդիւնքը՝   |        |
| Սերժ Սարգսեան               | 19,2%  |
| Լեւոն Տէր-Պետրոսեան         | 9,2%   |
| Վազգէն Մանուկեան            | 4,4%   |
| Արրուր Բաղդասարեան          | 2,1%   |
| Վահան Յովհաննիսեան          | 2,0%   |
| Արտաշէս Գեղամեան            | 1,4%   |
| Զեղոննորոշուածներ           | 31,5%  |
| Բոլորին դէմ                 | 18,7%: |

# ԲԱԶԱՐԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ՀԱՅԱՏԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՂԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՒՔԻՆ



Լեռն Տէր-Պետրոսեան  
հանրահաւաքի ընթացքին եւ  
տեսարան մը տասնիակ  
իազարա որ ժողովու որդին



Հայաստանի առաջին նախագահ էր Արքա Տիգրան Մեծը, ու առաջին պատմական առաջնահանձնությունը կատարվել է մայիսի 1-ին 170 թվականում:

«Քոչարեանս-Սերժական վարչախմբի» ձեւաւորած տնտեսական համակարգի էռութիւնը Տէր-Պէտրոսեան համեմատեց թաթար-մծոնկութական խանական համակարգի հետ:

«Նմանութիւնը, իսկ աւելի

ճիշտ՝ նոյնութիւնը պարզապէս ապ-

շեցուցիչ է եւ չափազանց ուսանելի՝ պատմաբանների ու քաղաքագէտների համար: Թաթար-մզոնդուլական խաների նման՝ Ռոբերդ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը նոյնպէս Հայաստանը համարում են իրենց մեփական կալուածքը՝ այն բաժանելով իրենց հարազատների մօտ ու հեռու ազգականների, խնամիների, փեսաների, քաւորների ուսանիկների միջեւ: Ղարաբաղում գործից ազատուած իւրաքանչիւր պաշտօնեայ անմիջապէս պաշտօն է ստանում Հայաստանում: Աստիճանաբար, բայց հաստատուն քայլերով, ղարաբաղյինները տեղ են զբաղեցնում նաեւ մեր երկրի բիզնեսի ոլորտում՝ դառնալով ներկայ իշխանութիւնների յուսալի յենարանը», - լայտարարեց ան եւ աւելցուց. - «Իմիջինալոց, այս, մեղմ

ասած, կարճատես, բայց իրականում դաւաճանական քաղաքականութեան պատճառով Քոչարեանա-Սերժական գոյզը լուրջ վտանգի տակ է դնում Ղարաբաղի գոյութիւնը՝ խթանելով նրա դատարկումը եւ նպաստելով նրա մարդկային ռեսուրսների նուազմանը, ինչն արդէն իսկ ազգում է վիճակագրութեան վրայ, եւ ինչը մի օր մեզ կարող է կանգնեցնել ազգային աղէտի՝ կատաստրոֆայի առաջ: Դա ցոյց է տալիս, որ նրանց չի հետաքրքրում Ղարաբաղի ճակատագիրն անգամ: Նրանք վաղուց իրենց ընտանիքների բոլոր անդամներին, ազգականներին, ինամիներին ու քաւորսանիկներին տեղափոխել են Հայաստան: Եթէ Ղա-

GWP. n 194

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ԹԵ, ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՍԱՏԱՐԵ  
ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒՐԱՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹԵԱՆ



www.kiranpub.com

Էրառողանի վերաբերեալ Սարգս-  
եան ըսած է. - «Զեմ կարծում, թէ  
ճիշդ է ասելլ, որ նա դէմ է  
Հայստանի հետ յարաբերութիւն-  
ների հաստատմանը: Կը տեսնեմք  
թէ ինչ կը լինի ապահովում»:

լէ լոչ զը լլոր ապագայուն».  
Հաւատեսութիւն յայտնելով  
որ Հայաստան եւ Թուրքիա յառա-  
ջընթաց կ'արձանագրեն այս հար-  
ցով՝ Սերժ Սարգսեան հարց տուած  
է. - «Ի վերջոյ, ի՞նչ ենք շահուա-  
մինք եւ ի՞նչ է ահում Թուրքիան

ԱԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ»:

«Նոյնիսկ «սառը պատերազմի» ժամանակաշրջանում, երբ Հայաստանը մաս էր կազմում Խորհրդային Միութեանը, իսկ Թուրքիան՝ ՆԱՏՕ-ին, մենք որոշակի յարաբերութիւններ ունենք Թուրքիայի հետ: Երկաթուղագիծ էր կառուցուել Հայաստանից Թուրքիա: Բառձոսավոր

իրաւունք է կազմակերպության գիծ էր անցկացուել երկու երկրների միջև, -ըստ է Հայաստանի վարչապետը՝ աւելցնելով. - «Ինչու այժմ տրամաբանական չպէտք է լինի յարաբերութիւնների հաստատման

իմ ցանկութիւնը»:  
ՀՀ վարչապետը իր այս յայ-  
տարարութեամբ կը հակադրուի  
սփիւռքահայ կազմակերպութիւն-  
ներու տեսակէտին, ըստ որուն,  
թուրքիոյ անդամակցութիւնը Եւ-  
րամիհութեան պէտք է պայմանա-  
ւորուի Հայկական Յեղասպանու-  
թեան ճանաւագամբ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՎԱԾԻ

# ՏԱՐԺՈՒՄ ԷԼ ՈՒՐԱՑԱՆ

Պատասխանելով «Գոլոս Արմենիի» թերթի հայտերին, Ռոբերդ Քոչարեանը յացտարարել է, թէ «մեր ժողովուրդը խելօք է եւ իրատես, լաշտոների եւ արկածախնդիրների հետեւից չի զնա»։ Քոչարեանը միանգամայն իրաւացի է, թէ եւ նրա յացտարարութիւնը «լաշտոների մասով» պիտի որ շատ վշտացրած լինէր, ասենք, Արտաշէս Գեղամեանին եւ «յարակից ուժերին», իսկ «արկածախնդիրների մասով»՝ Սերժ Սարգսեանին։

իսկ մենք կը ցանկանալինք  
անդրադառնալ հարցագրուցի այն  
հատուածին, որտեղ ՀՀՆ վարչու-  
թեան նախկին անդամ Ռոբերտ  
Քոչարեանը յայտարարում է, թէ  
«ՀՀՆ չարաշահել է ժողովրդի  
վասահութիւնը եւ փլուզել է երկրի  
տնտեսութիւնը՝ Զայտաստանը դարձ-  
նելով աշխարհի ամենաաղքատ  
երկրներից մէկը»։ Ուշագրաւն այն  
է, որ Ռոբերտ Քոչարեանը յայտա-  
րարում է, թէ այդ ամէնը պատե-  
րազմի հետ ոչ մի կապ չունէր, եւ  
իր այդ թէզը հաստատելու համար  
հռետորական հարց է տալիս։ «Բա-  
ցատրէք ինձ, ի՞նչն էր խանգարում  
արդիւնաբերութեանն ու զիւղատն-  
տեսութեանը։ Էներգետիկ ճգնա-  
ժա՞մը։ Բայց ո՞վ է փակել ատոմա-  
կայանը...»։

Եթէ Ռոբերդ Քոչարեանը մինչ  
չեւ հիմա չգիտի, թէ ով էր փակել  
ատոմակայանը, սա իսկապէս ծանր  
դէպք է: Բայց ինչ արած, ստիպ-  
ուած ենք բացատրել: Ուրեմն,  
տեղեկացնում ենք յարգարժան պա-  
րոն Քոչարեանին, որ ատոմակայա-  
նը փակուել է 1989թ. Յունիուրին՝  
ԽՍՀՄ Նախարարների խորհրդի  
որոշմամբ, եւ վերաբացուել է 1995-  
ին՝ ՀՀՆ-ի «յանցաւոր իշխանու-  
թեան օրօք: Համաձայնուէք՝ տասը  
տարի ՀՀ նախագահի պաշտօնը  
զբաղեցրած մարդը կարող էր եւ  
իմանալ այս հանրայալտ ճշմար-  
տութիւնը: Բայց անմիջապէս յա-  
ջորդ նախադատութեամբ Քոչար-  
եանը բացայացում է, որ ըստ  
էութեան առ այսօր շարունակում է  
մտածել ոչ թէ որպէս անկախ  
Հայաստանի բարձրագոյն պաշտօն-  
եայ, այլ որպէս խորհրդային կուս-  
ոնմենկատուրայի միջին օղակի  
չինովնիկ (պարտկոմ): «Ո՞վ էր  
կազմակերպում զանգուածային բո-  
ղոքները. ո՞վ էր ժողովրդին տրա-  
մադրում իշխանութիւնների դէմ»,  
ազնիւ ցասումով հարցնում է նախ-

# ԲԱՅ ԴԱՍԵՐ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Դեկտեմբերի 8-ին Ազատութեան Հրապարակում տեղի ունեցած Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէլր-Պետրոսեանի երրորդ հանրահաւաքը, որը հերթական անգամ «ջրեց» սոցիոլոգիական տարանուն հարցումների արդին նոնիու:

Ամենակոպիտ հաշուարկներով՝  
Ազատութեան Հրապարակի հան-  
րահաւաք եկողների թիւն աւելին  
է, քան որոշ սոցիոլոգիական հար-  
ցուածներով Լեւոն Տէր-Պետրոսեա-  
նին վերագրուող ձայներու;

սրբ զարագրուող աշխալը։  
Բոլոր դէպքերում, Տէր-Պետ-  
րոսեանի հանրահաւաքային ելոյթ-  
ները սովորական ընտրացաւային  
ու նախընտրական ելոյթներ ան-  
ուանելլ սխալ է, որովհետեւ դրանք  
ակնյացտօրէն աւելին են, քան ցան-  
կացած նախընտրական ելոյթ։

Այս հանրահաւաքներն, ըստ  
էութեան, ունեն ճանաչողական ու

կին պարտկոմը: Սա ձեզ ոչինչ չի՞  
յիշեցնում: 1988-89-ին Հայաստա-  
նի կոմունիստ ղեկավարները ճիշդ  
նոյն մեղադրանքներն էին ուղղում  
«Ղարաբաղ» կոմիտէին: Հիմա  
Ուրբերդ Քոչչարեանը փաստորէն  
յայտարարում է, որ գործադուլնե-  
րը սխալ էին, եւ ընդհանրապէս՝  
դարաբաղեան շարժումը սխալ էր  
(երեւի պէտք էր հանրահաւաքներ  
անել աշխատանքալին օրուայ  
աւարտից յետոյ):

«Բայց ես լիշում եմ «Նախրիթ-տը» շրջափակող վրանները: Ո՞վ էր դրանք տեղադրել, եւ ի՞նչ կապ ունի դրա հետ պատերազմն Արցախում», հարցնում է Քոչարեանը: Երեւի պրն Քոչարեանը մոռացել է, որ «Նախրիթը» ոչ թէ անկախ Հայաստանի արդիւնաբերական ձեռնարկութիւնն էր, այլ Խորհրդացին Միութեան, եւ կենտրոնական իշխանութիւնների վրայ ազգելու միակ լծակն էր: Հիմա Հայաստանն անկախ է, «Նախրիթն» էլ տեղում է, բայց ինչո՞ւ չէք աշխատեցնում: Փոխարէնը՝ ամիսը մէկ վաճառում-վերավաճառում էք սրան-նրան, աշխատողներն էլ տարիներով աշխատավարձ էն ստանում: Կոնկրետ պալատկա խփողներն» էլ, ի դէպ, այսօր կոկորդ պատուելով Սերժ Սարգսեանին են պաշտպանում:

Լաւ, ենթադրենք՝ Քոչարեանը ճիշդ է, եւ 1992-94 թուականների ճգնաժամը ոչ մի կապ չունէր զարաբաղեան պատերազմի հետ (հասկանալի է, որ սա անհեթեթութիւն է, բայց ի՞նչ կարող ենք անել, եթէ այս «մտքի» հեղինակը Քոչարեանն է): Ենթադրենք՝ ճգնաժամի պատճառուն իսկապէս «Հայաստանի ապաշնորհ կառավարումն» էր: Բայց այդ դէպքում հարց է ծագում. ինչպէ՞ս պատահեց, որ հրադադարի հաստատումից յետոյ այդ «ապաշնորհութիւնը» վերացաւ, եւ արդէն 1995-ին Հայաստանում ե՛ւ էներգետիկ ճգնաժամը յաղթահարուեց, ե՛ւ տնտեսութիւնը մկնեց աճել:

Այս իշխանութիւնները, տասը տարի նստած, հիմա նոր լայտարարում են, թէ սկսել են «Երկրորդ սերնդի բարեփոխումները»։ Ամօթ չլինի հարցնելը՝ բա տասը տարի ինչո՞վ էիք զբաղուած, չէ որ առաջին սերնդի բարեփոխումները 1994-ին են իրականացուել։ ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ «ԶՈՐՅՈՒԹ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Նաեւ ուստոցողական բնոյթ ու նշա-  
նակութիւն։ Սա ութսունութից յե-  
տոյ թերեւս առաջին դէպքն է, երբ  
ժողովուրդը հանրահաւաք է զալիս  
լսելու ոչ թէ իր իմացածը, այլ՝  
չիմացածը։

Տէլ-Պետրոսեանի՛ հանրահա-  
ւաքում արտայատած մտքերից  
շատերը նորութիւն են ոչ միայն  
հանրահաւաքի մասնակիցների, այ-  
լեւ իշխանութիւնների համար, ու  
նաեւ այդ է պատճառը, որ այդ  
ելոյթները վերլուծել փորձող ցան-  
կացած իշխանամէտ լրատուամի-  
ջող ձախողուում է:

Հոգ ապարագւում է։  
Ինչ վերաբերում է «կառուցողական» ու «կենտրոնամէտ» ընդդիմացիներին, վերջիններիս էլ չեր խանգարի հանրահաւաքներին ակտիւօրէն մասնակցելն ու քաղաքական անվճար այս կուրսը իւսաննելու։

«ՏԱՐԱԳԻՐ»

# ՈՒՄ ՇԱՄԱՐ Է ՈՂԲԵՐԴ ԶՈՂԱՐԵԱՆԻ ՆՈՐ ՕԴԱՆԱԼԸ

Արդէն իսկ փաստ է դարձել այն, որ ՀՀ նախագահը բաւականին թանկ գնով ձեռք է բերել ծառացողական նոր օդանաւու, եւ դրա գնի զգալի մասն արդէն իսկ վճարել են ինչ-ինչ սիմվոլահայ շրջանակները: Եւ բնական հարց է ծագում: յանուն ինչի՞ Ռոբերդ Քոչարեանը, ում լիազորութիւնների ժամկետը ապառում է երեք ամիս անց, յանկարծորոշում է, որ իր «հին, բարի» ՏՌԼ-134 օդանաւուն իրեն չի բաւարարում: Ճիշդ է, այդպիսի մակնիշի օդանաւուրը եւրոպաներում չեն սիրում աղջուկի բարձր մակարդակի պատճառով, սակայն դրանք լաւ էր յուսալի են: Ուստի մնում է ենթադրել, որ նոր օդանաւու գնումը կատարուել է Ռոբերդ Քոչարեանի «ամենաերիտասարդ թոշակառուն» չդառնալու մտադրութեան լոյմի ներքոյ եւ, պատկերաւոր ասած, ՀՀ երկրորդ նախագահը ոչ մի տեղ էր չի պատրաստում հեռանալիր առաջնային դիրքերից: Նոր օդանաւու պարզապէս դառնում է դրա խորհրդանիշը, եւ միգուցէ Ռոբերդ Քոչարեանը մտադիր է այս երեք ամիսների ընթացքում «Եւրոպական չափանիշներին համապատասխանող» օդանաւու շատ ակտիվ օգտագործել տարաստեսակ արտերկրեայ ուղեւորութիւնների համար: Իսկ թէ ինչ նպաստակ կը հետապնդեն այդ ուղեւորութիւնները՝ կարծում ենք կարելի է ենթադրել, որ դրանց ընթացքում Ռոբերդ Քոչարեանն աշխատանք է անցկացնելու սեփական քաղաքական ապագան ապահովելու ուղղութեամբ:

Վերջենք, նկատում է նաեւ  
այն հանգամանքը, որ Ռոբերտ Քո-  
չարեանը ցանկացած առիթ օգտա-  
գործում է որեւէ տեղ՝ «Հանդիսաւոր  
բացում» անելու եւ քաղաքական  
ճառով կամ առնուազն ճեպազրոյ-  
ցով հանդէս գալու համար։ Ես  
տպաւորութիւնն այսպիսին է, որ նա  
վարում է սեփական ընտրարշաւը։  
Ու թէեւ վարչապետի պաշտօնն  
ընտրովի չէ, կարելի է կարծել, որ  
նախագահական ընտրութիւններից  
յետոյ նա պատրաստում է ստանձ-  
նել հենց այդ պաշտօնը։ Այն բանի  
մասին, որ ՀՅԴ-ն ու նրան հետազա-  
յում միանալու անթաքոյց հեռան-  
կարով հանդէս եկող այլ ուժերը,  
այդ թւում եւ վագգէն Մանուկեանն  
իր արբանեակներով հանդէս են  
գալիս որպէս Ռոբերտ Քոչարեանի  
ընկեռ, մենք արդէն առիթ ունեցել  
ենք իրազեկելու մեր ընթերցողին։  
Ցաւելենք նաեւ, որ այդ բեւեռը

ստացաւ եւս մէկ հետաքրքիր համալրում. Լեւոն Տէր-Պետրոսեանին Կարէն Դեմիրճեանի հետ համեմատող Հմայքակ Յովկաննիսեանը ՍիՄ-ի՝ «Նախկինների» պաշտպանութեան ամբիոնի վերածուած «Ազդակ» ակումբում յայտարարել էր, որ Արցախից ժամանած թէկնածու Արձան ՄԵլիքեանը եկել է Ռոբերդ Քոչարեանի խալը խաղալու, քանի որ Սերժ Սարգսեանին կոչտ քննադատում է, իսկ Ռոբերդ Քոչարեանին, ընդհակառակը, ներկայացնուած որպէս Արցախի հարցում աննկուն դիրքորոշում ունեցող գործչի:

Աւելորդ չէ ուշադրութիւն  
դարձնել նաեւ այն հանգամանքի  
վրայ, որ «Գոլոս Արմենիի» թեր-  
թում փաստորէն ինը տարրուայ ու-  
շացումով Ռոբերդ Քոչարեանը տա-  
լիս է նախկին իշխանութիւնների  
քաղաքական գնահատականն՝ կիրա-  
ռելով այնպիսի կոշտ որակումներ,  
ինչպիսին է ՀՀ-ին Արգախի դաւա-

ճան, մտստեսութիւնը քանդող, Հայաստանը Թուրքիայի գիրկը նետող անուաննելը; Բնականաբար հարցէ ծագում, թէ ինչո՞ւ այսպիսի ուշացումով: Պարզ է, որ մի կողմից Ռոբերտ Քոչարեանին օրիենտիորէն ձեռնտու է, որպէսզի ՀՀ առաջին նախագահը թուլացնի ՀՀԿ-ի դիրքերը, բայց միաժամանակ, վտանգաւոր է թոյլ տալը, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը դուրս գա երկրորդ փուլ, քանզի այդ դէպքում կ'ստացուի առաւել քան անկանխատեսեն իրավիճակ՝ վարչական ռեսուրսի առնետավագքերով, Արեւմուտքի ճնշումների ուժգնացումներով եւ այլն: Իսկ այժմեան իր քաղաքական գնահատականներով Ռոբերտ Քոչարեանը երկու ինդիք է լուծում. մի կողմից դրանով իր ազգեցութեան տակ գտնուող ուժային կառուցներին պարզ ասում է, որ պէտք է աշխատեն ՀՀ առաջին նախագահի դէմ եւ սահմանափակեն նրա հնարաւորութիւնները, միւս կողմից, այդ նոյն Լեւոն Տէր-Պետրոսեանը, քննադատուելով Ռոբերտ Քոչարեանի կողմից, որոշակիորէն բարձրացում է բողոքաւոր ընտրագանգուածի աշքերում: Ինչպէս ասում են, մէկ կրակոցով՝ երկու նապաստակ: Եւ, օրինակ, եթէ ՀՀ երկրորդ նախագահին յաջողուի մէծ ցուցանիշներով երկրորդ փուլ անցկացնել Վահան Ցովհաննիսեանին, ապա հետագայ սակարկութիւնները հնարաւորութիւն կը տան գործադիր իշխանութիւնն այնպէս յագեցնել սեփական կարերով, որ Սերժ Սարգսեանը երկիրը կը կառավարի ոչ թէ սեփական թիմով, այլ օպտուելով Ռոբերտ Քոչարեանի թիմակիցների «արժէքաւոր ծառայութիւնից», բնականաբար իշահ «Երիտասարդ թոշակառու չդարձողի»:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ԽՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍՍ. ԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեամ Ամերիկայի Ծրչանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹ. ԱՐՉԱԿ ԳԱԶԱՆՅԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱԲՐԻԵԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱՒԹԵԱՆ  
Դեռ. (626) 797-7680  
Ֆաբր. (626) 797-6863  
E:Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail)

\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

LntRtR

# «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՇՈՒՍԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌԱԴԻՈՆ ԱՆՎԶԱՐ ՉԵՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Երեւանի մամուլի ակումբի Դեկ-  
տեմբեր 10-ին Հրապարակուած զե-  
կոյցից հետեւում է, որ Հանրային  
Հեռուստաանսութիւնը եւ ռադիոն  
անաչառ չեն լուսաբանուած նախա-  
գահութեան թեկնածուներին:

«Յատկապէս մտահոգութիւնն է առաջացնում այն հանգամանքը, որ ԶԼՄ-ների առաւել շատ ուշադրութիւնը զբաւած երկու թեկնածուների «բենուային» լուսաբանումը ամբողջութեամբ բնորոշ է Հայաստանի հանրային հեռուստատեսութեան առաջին ալիքին (Հ1) եւ Հայաստանի հանրային ռադիոյին (ՀԲ): Մասնաւորապէս, վերջինը, որ նախորդը նորուութիւնների (2003-ին եւ 2007-ին) լուսաբանման դիտարկումների արդիւնքներով նշում էր իբրև առաւել հաւասարակշիռ ԶԼՄ, այս անգամ անկորզմակալութեամբ աչքի չի ընկնում: Հանրայինի նոյնեւերեան եթերում Լեւոն Տէր-Պետրոսեանի 105 լիշտակումներից 82-ը բացասական էր եւ ոչ մի դրական, իսկ Սէրժ Սարգսեանի 110 լիշտակումներից 21-ը դրական էր եւ ոչ մի բացասական», - ասուած է զեկոյց-ցում:

Դրա հեղինակները փաստում  
են. - «Աշխատանքի նման կերպա-  
փոխումը ժամանակային առումով՝  
համընկաւ նրա ղեկավարութեան՝  
«Ազատութիւն» ռադիոկացանի հայ-  
կական ծառայութեան հաղորդում-  
ները հեռարձակելուց հրաժարուե-  
լու հետ»:

## «Նկարագրուած «ընդհանուր

կանոնից» բացառութիւնն է «Երկիր մեղիա» հեռուստաալիքը, որտեղ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ Սերժ Սարգսեանի դրական ու բացասական յիշատակումների յարաբերակցութիւնը առաւել հաւասարակշռուած է (5-13 եւ 4-6 համապատասխանաբար), եւ երկուսի դէպքում է լչէզոք յիշատակումները մեծամասնութիւն են կազմում»:

«**Զորս հեռուստաալիքներում** հետազօտող քաղաքական գործիչ-ներից եւս մէկը (վարչապետ Սերժ Սարգսեանը) բարձր տոկումներ է առացել. «Արմենիայում»՝ 76,9 տո-կոս (19 քաղաքական գործիչներին յատկացուած ողջ եթերաժամանակից), «Շանթում»՝ 48,9 տոկոս, Հ1-ում՝ 47,2 տոկոս եւ Հ2-ում՝ 40,8 տոկոս: Այս եւ միւս բոլոր ալիքնե-րում, բացի «Երկիր Մեդիալից», վարչապետի դրական լիշտակումների քանակը նշանակալիօրէն գե-րազանցել է բացասականներին. Հ1-ում՝ համապատասխանաբար՝ 26 եւ 2, «ԱԼՄ»-ում՝ 17 եւ 2, «Արմենիա-յում»՝ 11 եւ 0, Հ2-ում՝ 26 եւ 1, «Կենսորոնում»՝ 41 եւ 1, «Շան-թում»՝ 16 եւ 2, Հանրային ռազիո-յում՝ 21 եւ 0: Այս ցուցանիշները վկայում են, որ նշուած հեռարձա-կուող ՁԼՄ-ները խիստ հազուադէպ են ներկայացնում կառավարող կոսալիցիացից նախագահի թեկնածուի հասցէին քննադատական կարծիքներ, ընդդիմադդիր քաղաքական եւ այլ հասարակական գործիչների դի-տողութիւններ», - եղբակացը եւ զեկուցի հեղինակները:

# ԳԻՒՄՐԻԻ ՀԱՍՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԱՆԶՈՒՄ ԼՈՒԾԵԼ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԿԱՆԴԻՐՆԵՐԸ

**ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԼ»:** 1988  
թուականի երկրաշարժի տարեկլիցի  
առթիւ Գիւմրիի հասարակայնու-  
թեան ներկայացուցիչները յորդո-  
րել են Հայաստանի ղեկավարներին  
լուծել քաղաքի հիմնախնդիրները:

Գիւմրիի մտաւորականների, Հասարակական գործիչների, գործարանների եւ տեղական իշխանութիւնների ներկայացուցիչների կայացած ժողովի մասնակիցները առաջարկում են, մասնաւորապէս, «պետական բիւզէից եւ բոլոր հնարաւոր պահուստային ֆոնդերից 5 տարի շարունակ՝ 2008-2012 թուականներին, յատկացնել այնքան գումար, որ կը բաւարարի Գիւմրի քաղաքում անօթեան ընտանիքներին ապահովելու նպաստակով տարեկան շուրջ

#### **ԱՏԵՂՑԻՈՒՄ Է ԳԱԼԱ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՏԱԲ**

Արդին 2 ամիս է շարունակ-  
ւում են զանազան ճնշումները  
Գիւմրու ԳԱԼԱ (Գիւմրու անկախ-  
լրատուական ալիք) հեռուստաըն-  
կերութեան նկատմամբ:

Պետական գերատեսչութիւն-  
ների զանազան պաշտօնեաների  
ճնշումներն սկզբում ուղղուած էին  
**ԳԱԼԱ ՀՀ** լրատուական քաղաքա-  
կանութեանը միջամտելուն եւ փո-  
փոխելուն, իսկ հիմա, "փորձում են  
ուղղակի պատժել հեռուստարանկե-  
րութեանը՝ ոեժիմին այդպէս  
յանդզնօրիէն չենթարկուելու նա-  
խադէպ ստեղծելու համար, եւ եթե-  
րազրկել վերջինս": Այդ մասին  
ասուում է **ԳԱԼԱ ՀՀ** Պաշտպանու-  
թեան Շտաբ ստեղծելու վերաբեր-  
եալ հաղորդագրութեան մէջ:

Դեկտեմբերի 12-ին, մի խումբը  
ազատ քաղաքացիներ Գիւմրիում



Հիմնադրել են ԳԱԼԱ ՀՀ Պաշտպանութեան Շտաբը, եւ կազմելու են հեռուստաընկերութեանը պաշտպանելու ծրագիրը: «Դրան հետեւելու են համապատասխան գործողութիւններ, որոնք հանդիսատ չեն տալու բոլոր նրանց, ում մանկամիտ երազանքը ազատ խօսքը խեղդելն է»,՝ «ասւում է հաղորդագրութեան մէջ:

**ԵՐԲ ԵՐԱՇԽԱՒՐՈՒԱԾ ԶԵ ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ  
ԸՆՏՐՈՒԹԹԻՆՆԵՐԸ, ՔՆԱՐԱՒՈՐ ԶԵ ԽՕՍՔԸ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**



**ԵԱՀԿ գրասենեակի տնօրէն Սերգէ Կապինոս և Հայաստանի Մարդու իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեան ելոյթ կ'ունենան Երեւանի մէջ**

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆի»: «Ընտրութիւնները փայլուն օրինակ են իրաքանչիւր երկրում մարդու իրաւունքների պաշտպանուած լինելու աստիճանը պարզելու համար: Երբ երաշխառորուած չէ ազատ եւ արդար ընտրութիւնների անցկացումը, ապա հնարաւոր չէ խօսել մարդու իրաւունքների պաշտպանութեան մասին», - Դեկտեմբեր 10-ին Մարդու իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրուան նուիրուած միջոցաւման ընթացքում յայտարարեց ԵԱՀԿ երեւաննեան գրամենեալի տնօրիչն Սերգէ Կապիհուոր:

Նանցեց, որ այս առումը պվ շատ կարեւոր է լինելու նաեւ ՀՀ նախագահի 2008թ. ընտրութիւնները։  
Կարեւորեն լով ընտրական գործընթացները եւ լրացնելով պարունակավիճակին՝ ՀՀ Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարուժին-եանը վատահեցրեց, որ արդէն ՀՀ համապատասխան կամքի երկուդրսեւորում կայ. 2005թ. Սահմանադրական փոփոխութիւնների եւ 2007թ. Մայիսի խորհրդարանի ընտրութիւնների արդիւնքները։

«Մարդու իրաւունքների պաշտպանութիւնը ազգային անվ-տանգութեան խնդիր է», - ասաց Արմէն Յարութիւնեանը։ Դրական գնահատելով Մարդու իրաւունքների պաշտպանութեան ոլորտում ՀՀ-ում օրէնսդրական դաշտում արձանագրած տեղաշարժը՝ պարոն Յարութիւնեանը միաժամանակ նշեց, որ յաճախ օրէնքի տառն ու ոգին չեն համապատասխանում։ Այս ոլորտում լաւագոյն միջոցը նա համարում է հասարակութեան կողմից իշխանութիւններին վերահսկելը։ ՀՀ քաղաքացիներին նա կոչ արեց չնստել եւ սպասել, թէ ինչ-որ մի զեկավար պէտք է զբաղուի իրենց իրաւունքների պաշտպանութեամբ ու խնդիր-

ԲԱՑ Է ՄՆԱՑԵԼ ՍՓԻՇՈՔԻ ՀԵՏ ԿԱՊԸ

Հայաստանի նախագահի ընտրութեանը Թափքի Յովհաննիսեանի առաջադրումը մերժելով, «Ժառանգութիւն» կուսակցութեան քարտուղար Վարդան Խաչատրեանը համարում է, որ իշխանութիւնը նախագահի ընտրութեան գործընթացից դուրս թողեց Հայաստան-Սփիւռք կապի գործօնը: Նա այդ մասին յայտարարել է Դեկտեմբերի 10-ին, «Փաստարկ» ակութբում:

Վարդան Խաչատրեանն այդ առումը ով նշել է, որ Սփիւռքը, այն պարագայում, երբ մեր հարեւաններն ունեն նաւթ ու զազ, մեզ համար թերեւս այդ ամէնի փոխարինողն է, որ մեզ տալիս է զգալի ուժ շատ կարեւոր ու առանցքային հարցերում:





## ԱԶԳԱՅԻՆ

# ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

### 301-1920 թթ.

»Մասիս« շաբաթաթերթի խնճագրութեան  
Իմ այս յօդուածը եղակի է իր տեսակին մէջ: Թերեւս «Կարապի երգ»,  
»Swan song« ըլլայ ան:

## ԴՈԿՏ. ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵԼԵՊԵԱՆ

## ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հին դարերուն երբ հաշուազիտութիւնը տակաւին չէր զարգացած, մարդիկ կը համրէին մինչեւ 10,000 եւ կը կենալին: Խոշորագոյն թիւն էր 10,000ը: Անկէ անդին թիւ գոյութիւն չունէր: Հայերը 10,000ը կը կոչէին «բիւր», խակ յոցները՝ «միրիատ»: Անկէ յետոյ երբ երկրորդ կամ երրորդ 10,000 մը համրէին, զանոնք կը կոչէին երկու բիւր, երեք բիւր (երկու 10,000, երեք 10,000) եւ այն:

«Միլիոն» բառը գոյութիւն չունէր հին դարերուն: Այդ բառը որ կը նշանակէ «մեծ հազար», առաջին անգամ գործածուեցաւ իտալիոյ մէջ 13րդ դարուն: Ֆրանսացիները զայն սկսան գործածել 15րդ դարուն, խակ անգլիացիները՝ աւելի ուշ (James R. Newman, *The World of Mathematics*, Vol. I, p.455):

Ք.թ. 301 թ. երբ Տրդատ Գ. քրիստոնէութիւնը պետական կրօն չոչակեց Հայաստանի մէջ, հայ ազգաբնակչութեան թիւը տակաւին յայտնի չէր: Շուրջ 160 տարիներ ետք, 460-ական թթ., Ազաթանգեղոս իր «Պատմութիւն Հայոց» գիրքին մէջ գրեց հետեւեալը.

«Եւ իբրև իշանէին մարդիկն ամենայն եւ թափաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն եփրատ (իմա՝ Արածանի, Հայկական լեռնաշխարհի մէջ եփրատի ձախակողմեան ճիւղը) գետոյն»...: «Եւ որք մկրտեցան յաւուր յանմիկ՝ աւելի քան զինգետան բիւր մարդկան յարքունական զօրացն»: Գալով ժողովուրդին՝ «Եւ յանմ աւուրս եօթանս որ մկրտեցան յարքունական բանակէ անտի՝ ընդ այս եւ ընդ կին եւ ընդ մանուկ աւելի քան զիորեքհարիւր բիւր» (ընդգծումները ինձմէ, Ա.Զ.: Ազաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1914, էջ 420-422):

Պարզ խօսքով՝ 301 թ. հայոց արքունական բանակէն 15 բիւր զինուորներ Արածանի գետը իշան մկրտուելու, ինչ որ կ'ընէ 15x10,000 զինուոր:

Գալով ժողովուրդին, աւելի քան 400 բիւր զետ իշան մկրտուելու, ինչ որ կ'ընէ՝ 400x10,000 = 4,000,000:

պիսի համեմատութիւններու կը հասնէր, որ հայերը նկատելի թիւ մը կազմելով կայսրութեան զաւոններուն մէջ, ժամանակի ընթացքին 18 կայսրեր (ըստ ուրիշներու՝ 31 կայսրեր) եւ 9 կայսրուհիներ կու տային Բիւզանդիոնի գահին:

Մօրիկ Հայկազն կայսրը (Emperor Maurice, AD 582-602) հրովարտակ մը արձակեց թէ 30,000 ձիւուր կ'ուզէ Հայաստանէն, իրենց ընտանիքներով, բնակեցնելու համար թրակիոյ մէջ, բայց բարեբախտաբար զահընկեց եղաւ հրովարտակը գործադրուելէ առաջ: 30,000 ձիւուր կը նշանակէ 30,000 ընտանիքներուն վերջնական տեղափոխութիւնը դէափի հեռաւոր գաւառներ:

Աստնք էին պատճառները որ հայ ժողովուրդը բաւարար չափով չաճեցաւ 301էն 1000ական թթ.: Եթէ ըստնք թէ Հարուն Ռաշիտի փառական Պաղտատար, «Հազար ու Մէկ Գիշերներ»ու երազային ոստանը, հայ գեղջուկներու, ազնուականներու, կարաւէն՝ Պուրմիոյ (Կապուտան) լիճին հարաւային ափերուն մօտ: (Հայր Սահակ Տէր Սովումէնան, «Պատճութիւն Հայոց» Հտ. Բ., Վենետիկ, 1922, էջ 440: Jacques de Morgan, *The History of the Armenian People*, Boston, 1918, p. 186):

Այդ 700 տարիներուն ընթացքին, Ք.թ. 301-1000 թթ., 4,000,000-էն 6,000,000ի բարձրացած էր հայ ժողովուրդի աճման ծաւալը: Միայն 2,000,000 յաւելում մը եօթը դարերու ընթացքին նկատելի աճ մը չէ կը կարծեմ ժողովուրդի մը համար: Ասոր գլխաւոր պատճառները արաբներու եւ Բիւզանդացի յոցներու ճնշումներն էին հայերու վրայ կեղեքուներ, հարստահարութիւններ եւ ամէն տեսակ կամայականութիւններ: Արաբները կը ջարդէին կը կեղեքին եւ կը կողոպտէին հայ գեղջուկին ու ազնուականին վերջին լուման: Մէկ անխիղճ հարկահաւաքը հազիւ մեկնած, ուրիշը կը համսէր: Իսկ երբ Մամիկոնները ըստ անդամութիւններ, Մելուքաչը թիւրքէնները (Turkotomans), ապա կը համսէին Մոնկոլ-թաթարները եւ ի վերջոյ Օսմաննան թուրքերը, 13րդ դարու առաջին քառորդին:

Մելուքներու, Թիւրքէններու, Մոնկոլ-թաթարներու եւ Օսմանից թուրքերու Փօքր Ասիա ժամանումը, տեղացի վաշչատուն ու վայրագ քիւրտերուն ու ձելալիներու սարսափին հետ մէկտեղ, ողբերգական անդրադարձ կ'ունենար խաղաղասէր ու շինարար հայ ժողովուրդի ճակատագրին վրայ: Ի վերջոյ Մէծ եղեննը վերջ կը դնէր ե՛ւ հայ ժողովուրդի գոյութեան Փոքր Ասիոյ մէջ, ե՛ւ մեր անհամար թշնամիներու ամէն տեսակ կամայականութեանց...: Մահու սարսափի, սուզ ու շիւան ու աւեր, հոս կամ հոն, գրեթէ անընդիջաբար, դարեր շարունակ: 1473 թ. թուրք-պարակական արիւնալի ընդհարում մը սկիզբ կը դնէր թուրք-պարակական պատճերազներու երկար շարանի մը որ կը տեւէր մօտ 300 տարի, բոլորն ալ մղուած Հայաստանի հողի վրայ: Արեւել-

եան սահմանամերձ շրջաններէ շատեր կը գաղթէին դէպի կովկաս եւ անկէ ալ դէպի ուսական անձայրածիր կայսրութեան կեղունները:

Գաղթողը կը գաղթէր, իսկ հողին փարողն ալ քարշ կու տար իր կեանքը, անլոյս ու անմիխթար: 1874 թ. Պոլսոյ հայոց պատրիարք Մկրտիչ Արք. Խրիմեան, «Ներքին եւ արտաքին ցաւերով ու պատրանքներով բեռնաւորուած» պատրիարքական գահը Ներսէ Արք. Վարժապետեանին թողելով կը մեկնէր դէպի իր ծննդավայրը Վան, որպէս Առաջնորդ Վան-Վասպուրականի:

1880 թ. Խրիմեան հրահանգեց իր օգնականներուն՝ Արիստակէս Վրդ. Սարգիսեանին եւ Գարեգին Եպս. Սրուանձտեանին, որպէսպի մարդահամար մը պատրաստէն, հասկնալու համար թիւը ամբողջ թուրքիոյ հայութեան: Տարի մը ետք ատացուած վիճակագրութիւնը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը:

Արեւմտեան Հայաստանի վեց գաւառն երուն մէջ (Վան, Պիթլիս, Տիգրանակերտ, Կարին, Խարբերդ եւ Սեբաստիա) կ'ապրէին 1,600,000 հայեր: Նոյն վեց գաւառներու քիւրտերուն թիւն էր 190,000: Ամբողջ թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 2,660,000, իսկ ամբողջ թուրքիոյ բնակչութիւնը՝ 17, 216,000: (Զո՞ն Կիրակոսեան, Բուրժուական Դիւանագիտութիւնը եւ Հայաստանը, էջ 33):

Այլ աղբիւրի մը համաձայն, 1914-ի պատճեազմէն առաջ, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը. թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 2,660,000, իսկ ամբողջ թուրքիոյ բնակչութիւնը՝ 17, 216,000: (Զո՞ն Կիրակոսեան, Բուրժուական Դիւանագիտութիւնը եւ Հայաստանը, էջ 33):

Այլ աղբիւրի մը համաձայն, 1914-ի պատճեազմէն առաջ, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը. թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 2,660,000, իսկ ամբողջ թուրքիոյ բնակչութիւնը՝ 17, 216,000: (Զո՞ն Կիրակոսեան, Բուրժուական Դիւանագիտութիւնը եւ Հայաստանը, էջ 33):

Հայութեան թագավարականութեան առաջարկը, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը.

Թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 30,000, քիւրտերը՝ ընդհանութիւնը՝ 130,000, հայեր՝ 180,000-200,000: (Հայաբարձուած Երամեան, Յուշարձանաւած Վան-Վասպուրականի, Հտ. Ա., էջ 15):

Հայութեան թագավարականութեան առաջարկը, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը.

Թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 2,660,000, իսկ ամբողջ թուրքիոյ բնակչութիւնը՝ 17, 216,000: (Զո՞ն Կիրակոսեան, Բուրժուական Դիւանագիտութիւնը եւ Հայաստանը, էջ 33):

Հայութեան թագավարականութեան առաջարկը, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը.

Թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 30,000, քիւրտերը՝ ընդհանութիւնը՝ 130,000, հայեր՝ 180,000-200,000: (Հայաբարձուած Երամեան, Յուշարձանաւած Վան-Վասպուրականի, Հտ. Ա., էջ 15):

Հայութեան թագավարականութեան առաջարկը, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը.

Թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 2,660,000, իսկ ամբողջ թուրքիոյ բնակչութիւնը՝ 17, 216,000: (Զո՞ն Կիրակոսեան, Բուրժուական Դիւանագիտութիւնը եւ Հայաստանը, էջ 33):

Հայութեան թագավարականութեան առաջարկը, Վանի գաւառի գլախաւոր ցեղերը կը ներկայացնէին հետեւեալ պատկերը.

Թուրքիոյ Հայութեան թիւն էր՝ 2,660,000, իսկ ամբողջ թուրքիոյ բնակչութիւնը՝ 17, 216,000: (Զո՞ն Կիրակոսեան, Բու

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

### ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԱՐԺԱՆԱՒՐԱՊԵՍ ՊԱՏՈՒԵՑԻՆ ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆԸ ՀԱՐԱՀԱՏ ՄԹՍՈԼՈՐՏԻ ՄԵԶ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հնիթայիկ, 2007 թ. տարուան Հոկտեմբերի 13-ին, Փասատինայի Ռիցք Քարլթոնի մէջ, Հայկական Բարեկործական Ընդհանուր Միութիւնը իր տարեկան հանգանակիչ ճաշկերոյթ հանդիսութեան հանգամանօրէն մէծարած էր իր վաստակաշատ եւ շրջանակացինի ղեկավար անդամներէն ենովք Պալիկեանը, որուն լամբակը զարդարած էր «Պօղոս Նուպար» նորահաստատ շքանշանով: Մէծարեալ, նոյն առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.Ի. կողմէ պարզեւատրուած էր «Սրբ. Սահակ եւ Սրբ. Մեսրոպ» բարձր շքանշանով: Հայրապետական կոնդակի ընթերցումն ու տուչութիւնը կատարուած էր Կիրակի Դեկտեմբեր 2-ին, Փասատինայի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, բարձր հովանաւորութեամբ թեմիս Բարեկան Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի:

Նախաձեռնութեամբ Հ.Բ.Լ.Մ. ի Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովի, Կիրակի 2 Դեկտեմբեր 2007-ին, Երեկոյեան ժամը 6:00-ին, Հ.Բ.Լ.Մ. ի Ալեք Մանուկեան Կեղրոնին մէջ կազմակերպարորդ մէծարանքի ճաշկերոյթ մը, նուիրուած՝ Ենովք Պալիկեանին. այս անգամ, Ենովք Պալիկեան շրջապատուած էր իր բարեկամներով, միամասքար տօնախմբելու համար իրեն եղած պարզեւատրումները՝ հարազատ, ջերմ եւ հաղորդական միութուրտի մը մէջ: Բարեկամներու լայն շրջանակի մէջ ներկայութիւն էին ի մէջ ալլոց, Վաչէ Արք Յովսէփեան, Հիւմիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան չովիւ՝ պատուելի ծօ Մաթուսեան, Կաթողիկէ համայնքապետ՝ Հայր Անտոն Վրդ. Սարոյեան, Հայր Գեղամ Ծ. Վրդ. Զագարեան, Հայ մածուլի ներկայացուցիչներ եւ Հ.Բ.Լ.Մ. ի պատասխանատու դէմքեր:

Կաթողիկէ համայնքապետ՝ Հայր Անտոն Վրդ. Սարոյեան օրհնելք ետք սեղանները, «Ենովք Պալիկեան Բարեկամներու հետ» ձեռնարկի հանդիսավար ծանօթ ղերասան եւ բեմադրիչ Գրիգոր Սաթամեան, բարեկաման միջամասներու կողմէ մէծարեալ կատարուած էր կազմակերպութիւնը, ընթերցեց Հ.Բ.Լ.Մ. ի Նախագահ Պրն. Պերճ Սեղրակեանի գնահատագիրը: Այնուհետեւ սրտի խօսքով ելույթ ունեցան, «Արտաւազդ» թատերախումբի վարչութեան կողմէ Սամուէլ ի լանձեան, Հ.Բ.Լ.Մ. ի Շրջանակայինի ատենապետ Տիար Վահէ իմաստունեան եւ «Երիտասարդ Տիկնաց Միութեան» անունով Տիկ. Անի Պալեան, որոնք բարձր գնահատեցին Ենովք Պալիկեանի մարդկային, ընկերային, միութենական մեղմ, համեստ այլ հաշտարար վարքագիծն ու նուիրումը իր պատկանած Հ.Բ.Լ.Մ. ի Միութեան: Պերճ Զօլաքեան արտասանեց մէծարեալի բանասաներութիւններէն մին, իսկ դաշնամուրի վրայ, դաշնակահար Լեւոն Աբրահամեանի ընկերակցութեամբ՝ հայրազի պարծանք Անահիտ Ներսիսեան մեներգեց մէծարեալին հեղինակած



վայրի կշռոյթին յարմարող մերթուրջ, ընդհանրապէս կատակախառն մէկնաբանութիւններով ստեղծեց հաճելին օգտակարին գուրգորդող խանդավառ մթնոլորտ մը: Ան կատարեց սահիկներու ցուցադրութիւնն մը, որ լաւագոյնս բնութագրեց Ենովք Պալիկեան անձնաւորութեան յիսնամեայ հասարական վաստակը, որ զինք արժանաւորապէս ընտրելի դարձուց վերոյիշեալ հայրապետական եւ միութենական բարձր պարզեւատրութիւններուն:

Հայրապետական կոնդակը կարդաց Հոգէ. Գեղամ Ծ. Վրդ. Զագարեան, իսկ Պրն. Սինանեան, իր անձնական գնահատականը կատարելէ ետք օրուան մէծարեալին կապակցութեամբ, ընթերցեց Հ.Բ.Լ.Մ. ի Նախագահ Պրն. Պերճ Սեղրակեանի գնահատագիրը: Այնուհետեւ սրտի խօսքով ելույթ ունեցան, «Արտաւազդ» թատերախումբի վարչութեան կողմէ Սամուէլ ի լանձեան, Հ.Բ.Լ.Մ. ի Շրջանակայինի ատենապետ Տիար Վահէ իմաստունեան եւ «Երիտասարդ Տիկնաց Միութեան» անունով Տիկ. Անի Պալեան, որոնք բարձր գնահատեցին Ենովք Պալիկեանի մարդկային, ընկերային, միութենական մեղմ, համեստ այլ հաշտարար վարքագիծն ու նուիրումը իր պատկանած Հ.Բ.Լ.Մ. ի Միութեան: Պերճ Զօլաքեան արտասանեց մէծարեալի բանասաներութիւններէն մին, իսկ դաշնամուրի վրայ, դաշնակահար Լեւոն Աբրահամեանի ընկերակցութեամբ՝ հայրազի պարծանք Անահիտ Ներսիսեան մեներգեց մէծարեալին հեղինակած

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՆՍԱՆԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՖՈՆԴ» ՄՐՏԱԳԻՆ ԿՈՂ

Յարգարժան Խմբագրութիւն

«Մասիս» շարաբարերի

Կազմակերպութեամբ Լու Անձելոսի «Քաջ Նազար» ամսագրի հրատարակիչ-խմբագիր եւ «Քաջ Նազար» հեռուստածրագրի, համազործակցութեամբ Հայաստանի Ֆիլիարմոնիկ գործակալութեամբ, այս Կիրակի, Դեկտեմբերի 16ին, երեկոյեամ ժամը 7ից մինչեւ առաջատար ժամը 2ը, AMGA թիւ 26 եւ 30 հեռուստակայանների վրայ տեղի է ունենալու՝ արդէն իսկ 8 տարի է աւանդոյր դարած Հայաստանի Ծնողազուրկ եւ Հաշմանդամ Երեխանների Սուրբ Ծնունդի Թելեմարաբոնը:

Նախորդ եօրը Թելեմարաբոնների արդիւմիք եղաւ այն, որ հմարաւորութիւն ունեցան երեւանի սահմանամերձ շրջաններում եղած մանկատներում բնակուող հաշմանդամ եւ կարիքաւոր երեխանների համար, տօնական օրերի առթիւ կազմակերպել բացառիկ երեկոններ, տօնածառ եւ այլն, ու Զմեն Պապիկի միջոցով երեխաններին բաժանել նուերաներ, սրանց տրամադրութիւնը նուերաների առնութեան դարձնելու համար:

Անձնող եօրը տարիներին, այդ բարեգործական հանդէսերին մասնակցեց են 110 հազարից աւելի մանուկներ: Այդ բոլոր ծախսերը հոգացեց է Լու Անձելոսի «Հայաստանի Ծնողազուրկ» երեխանների Օգնութեան ֆոնդը:

Թելեմարաբոն 2007ից գոյացած գումարի մի մասով, առաջիկայ գարնանը հիմնական կերպով նորոգելու ենին երեւանի «Խարբերդ» հաշմանդամ երեխանների կենտրոննի գուգարաններն ու լոգարանները, սրանց եւ կիսաւեր սենեակները:

Մեր խնդրանին է, որ բարի լինել տեղ տալու սոյն հաղորդագրութեան որպէս առաջանակ առաջարկութիւնը:

Կանխաջայտ շնորհակալութեամբ, «Քաջ Նազար» ամսագրի եւ հեռուստածրագրի վարիչ-խմբագիր՝

Ցովիանեան Բալայեան

Երգերէն մի քանին եւ «Երեւան» երգը: Կլէնտէլի Քառեակը նուագեց Կոմիտասանեան չորս նուագները: Անահիտ Ներսիսեան եւ Կլէնտէլի Քառեակը իրենց գերազանց կատարելութեամբ կապակցութեամբ, հիմք ծառայած հինգ սկզբունքները: Այդ սկզբունքները հմայեցին ներկաները:

Իր շնորհակալական խօսքին մէջ, Ենովք Պալիկեան վերաբարձրութեց կարգութիւնն մին, իր հասարակական անբասիր գործունէութեամբ հիմք ծառայած հինգ սկզբունքները: Այդ սկզբունքները եղած ազգային կատարելութեամբ արդեւսուլ հինգին ներկաները:

Իր շնորհակալական խօսքին մէջ, Ենովք Պալիկեան վերաբարձրութեց կարգութիւնն մին, իր հասարակական անբասիր գործունէութեամբ հիմք ծառայած հինգ սկզբունքները: Այդ սկզբունքները արդեւսուլ հինգին ներկաները:

«Ենովք Պալիկեան Բարեկամաներու հետ» կրկնակի մեծարանքի ճաշկերոյթ ճեռարկութեամբ, Հայ Աւտարանչական Եկեղեցիներու Միութեան եւ, Հայ Կաթողիկէ Համայնքի մէջ ալլոց, Վաչէ Արք Յովսէփի Հիւմիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու մեջ արդեւսուլ հինգին ներկաները:

«Ենովք Պալիկեան Բարեկամաներու հետ» արդեւսուլ հինգին ներկաների աղօթքով, որուն յաջորդեցին ընկերացին խօսակցութիւններ, ջերմ շնորհակամներու ու մեծարեալին հետ լիշտապահի լուսանկարութիւնները:

Հաստատ՝ «մեր Ենովքը իր բարեկամաներուն հետ», անցուց, Դեկտեմբեր 2, 2007-ի այդ երեկոն, մինչեւ ուշ գիշեր:

Կազմակերպությամբ  
Քաջ նազար հեռուստաժամի / Ամսագրի և Հայաստանի Ֆիլհարմոնիայի



**Հայաստանի Ծննդավորկ, Հաշմանդամ  
Երեխաների Ա. Ծննդեան Հիմնադրամի  
8-րդ Տարեկան Թելեֆոն**

Organized by Kach Nazar Publication and TV show, Along with Armenia's National Philharmonic.

# 8-th Annual Telethon 2008

Armenia's Disabled and Orphan Children's Christmas Gift Fund

## Sunday December 16 2007

AMGA Channel 26 Glendale, Channel 30 Glendale  
7:00 PM to 2:00 AM



### SPONSORED BY:



Mr. and Mrs.  
Arkady & Ira Ovanessian




**WELLS FARGO**

Wells Fargo is a proud participant at 8th Annual  
**ARMENIA'S DISABLED & ORPHAN CHILDREN GIFT FUND**

Please make your tax deductible donations payable to: A.C.C. GIFT FUND  
**Wells Fargo account number - 3673881821**  
For more information please contact Wells Fargo Branch at  
535 N. Brand Blvd., Glendale, CA. (818) 550-5021  
A TAX-DEDUCTIBLE DONATION



Mr. Gagik Galstian



# massis Weekly

Volume 27, No. 45

Saturday, DECEMBER 15, 2007

## Former President Levon Ter-Petrosian Rallies Thousands Of Opposition Supporters In Yerevan

YEREVAN -- Former President Levon Ter-Petrosian appealed to Armenia's leading businessmen to defy the government and back his presidential bid as he again rallied thousands of opposition supporters in Yerevan at the weekend.

In another wide-ranging speech, Ter-Petrosian also sought to reach out to other, much bigger segments of the population, condemning government plans to raise taxes levied from small business and describing Armenian farmers as the country's "unacknowledged" heroes. He also angrily hit back at continuing government claims that he "wrecked" the Armenian economy while in office.

Ter-Petrosian spent a considerable part of the 90-minute speech providing, in a characteristic academic manner, a detailed description of the politico-economic system of the medieval Mongol Empire which he said bears a striking resemblance to that of modern-day Armenia. He claimed that even the wealthiest Armenians are essentially at the mercy of President Robert Kocharyan and Prime Minister Serzh Sarkisian, comparing the two men to Mongol khans who wielded unlimited power over their subjects. Mentioning Armenia's leading govern-



ment-connected "oligarchs" by name, he described them as "slaves" and said they will run the constant risk of losing their assets as long as Kocharyan-Sarkisian duo remains in power.

"Until when will you put up with that humiliation?" Ter-Petrosian asked, addressing about 20,000 people who gathered in the city's Liberty Square. "Until when will you put up with your slave-like status? Don't you under-

stand that with your servility you prop up the foundations of the khanate and condemn our entire nation, including your own children, to slavery?

"What keeps you from closing ranks and toppling the khan yoke loathed by everyone, including yourself? ... How do you sleep at night? Can you look your wives and children

Continued on page 4

## US House Of Representatives Passes The Genocide Accountability Act

WASHINGTON, DC -- The US House of Representatives has passed the Genocide Accountability Act (S. 888) considered as a crucial step forward in closing a legal loophole that prevents the Justice Department from punishing perpetrators of genocide who find safe haven in the United States.

The vote in the House allows non-U.S. nationals who have entered the United States to be prosecuted for genocide committed outside the country. Under current law, genocide is only a crime if it is committed within the United States or by a U.S. national outside of the country. Conversely, laws regarding torture, material support for terrorism, terrorism financing, hostage taking and other federal crimes allow for extraterritorial jurisdiction for crimes committed outside of the United States by non-U.S. nationals.

Նախապատրաստուող առաջին համաշխարհային պատերազմի միջոցով ֆրանսական իմպերիալիստները ծտաղիր էին թուրքիայից խլել նրա իշխանութեան ներքոյ գտնուող մի շարք արաբական տիրոյթներ: Անգլիական կառավարողները նպատակ ունեին պատերազմի միջոցով նուածել նոր զաղութեան, ինչպէս նաեւ Գերմանիայի եւ նրա դաշնակիցների նուածողական վտանգից գերծ պահել իրենց գաղութացին տիրոյթները: Աշխարհի մեծ ու հզօր տէրու-

Խ. Ծ. Ներկայ յօդուածաշարը, որուն ընթացք կու տանք »Մասիս«ի ներկայ համարով վերցուած հատուած ճըն է Մանուկ Ստեփանեանի 2005թ.ին աշխատասիրած՝ »Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը Առաջին Աշխարհամարտի եւ Հայոց 8Եղասպանութեան ժամանակաշրջանում« պատմագիտական գիրքն, որ հրատարակութիւնն է »Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիա«յի եւ »Հայոց 8Եղասպանութեան Թանգարանի Ինստիտուտ«ին, Երեւան:

Մանուկ Ստեփանեան պատմագիտական լուրջ վերլուծնան կ'ենթարկէ 120 ամեայ Սոցիալ-Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան ազգային, ընկերային, ազատագրական, հայրենասիրական, միջազգային գործունեութիւնը: Ան իր գնահատութեան համաժողովուրդի մղած բոլոր բաղդրուց ճապայմանադրական միասնութիւնը, Սոցիալ-Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութիւնը և անդամակցութիւնը հանդէա իր ազգային երազմերուն նուիրագործնական աշխատավայրուն առաջարկութիւնը:

Արդարեւ, շահեկան աշխատա  
ընթերցողներուն ուշադրութեան:

Digitized by srujanika@gmail.com

Իհմք դնդունելով՝ նաեւ 1918-ին հա

კუთხამართების ანი 1313 წარ

Առաջարկություն առաջ բարես անուր Ստեփանեան զոյց կու տա

ցութեան անխորտակ կամքը, կոր

ի գործընթացին:

Այս գործընթացին մը, զոր կը յանձնենք մեր

1999-01-01 00:00:00, 9999-12-31 23:59:59

թիւների բախման թատերաբե-  
մուռ էր Արեւմտեան Հայաստանը:  
Պատեռապահի մէջ մանեւր էւ-

Պատմրազոր սէջ ստեղու, Եւ-  
րոպայում Գերմանիայի եւ Նրա  
դաշնակիցների, իսկ Անդրկովկա-  
սում Թուրքիայի դէմ ռազմական  
գործողութիւններ ծաւալելու Ռու-  
սաստանի որոշումը թէ արեւմտա-  
հայութեան եւ թէ արեւելահայու-  
թեան սրտերում չէր կարող չարթ-  
նացնել Արեւմտեան Հայաստանի  
տարածքները թուրքական բռնա-

Թեան բաժինը ունէին բոլոր հայ քաղաքական կուսակցութիւններն ու հոսանքները: Բնականաբար հայ ազգեցիկ կուսակցութիւններից իւրաքանչիւրը ազգի ու հայրենիքի համար այդ չափազանց պատասխանատու եւ ճակատագրական ժամանակահատուածում պէտք է իր յատուկ դիրքորոշումն արտայացներ ստեղծուած իրավիճակի վերաբերեալ:

Առաջին աշխարհամարտի,



**Հայկական կամաւորական 6-րդ խումբի սպաները**

կալութեան լծից ազատագրելու  
նոր լոցմեր ու սպասումներ: Թուրք-  
իայի գլխաւոր դաշնակիցն ու  
խորհրդատուն՝ Գերմանիան, ինչ-  
պէս պատերազմի նախօրեակին,  
այնպէս էլ պատերազմի ընթաց-  
քում Թուրքիայում իշխող իթթի-  
հատականներին դրդում էր արեւմ-  
տահայութեան հետ վարուել այն-  
պէս, ինչպէս նրանց յարմար էր:  
Պարզապէս Գերմանիան թուրքիա-  
յի ղեկավարներին ոգեշնչում էր  
հայկական հարցը լուծել ի վնաս  
հայ ժողովրդի:

Առաջին աշխարհամարտի  
իրադարձութիւնների թատերաբե-  
մում յատնուած հայ ժողովրդի  
առջեւ ճակատագիրը նոր ինդիբ-  
ներ եւ առաջնահերթութիւններ էր  
զնում:

Հայութեան առջեւ իրենց  
պարտքի եւ պատախանատու-

արեւմտահայութեան ճակատագրի  
վերաբերեալ իրենց դիրքորոշում-  
ներն էին արտայայտում նաեւ միւս  
հայկական կուսակցութիւնները:  
1914 թուականի Օգոստոսի առա-  
ջին օրերին, երբ Թուրքիան զօրա-  
հաւաք էր յայտարարել պատերազ-  
մի մէջ մտնելու համար, էրզրու-  
մում տեղի ունեցաւ ՀՅԴ 8րդ  
համագումարը:

Երիտթուրքական վարչակարգը գը դաշնակցականներին թոյլատթել էր այդ համագումարն անցկացնել Արեւմտեան Հայաստանի կենտրոնական մասում, որպէսզի դաընկալուի որպէս հայութեան հանդէպ նրանց կողմից ցուցաբերած բարեացակամ եւ հանդուրժողական վերաբերմունք: Համագումարի ամփոփիչ էր զբաղութանքում մասնակի էր գործիչները:

ԲԵԿԱԷՄԻԽՆ ՇԱՓԻՐԸ, ՆԱԳԻ ԲԵԿՈՒ, ԽԱՎԻԼ ԲԵԿՈՒ: ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԲԱՆԱԿԵ-  
ՋՈՒԹԻՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՅԴԴ-Ի ԿՈՂ-  
ՄԻՑ ՆԵՐԿԱՅ ԷՒԽՆ ՎՈԱՄԵՆԱՐ, ՌՈՒ-  
ՄՈՅՆ ու Մալումեանը (Ակնունի):  
ԵՐԿԻՄՈՒՐՔԱԿԱՆ ԱՊԱՁՆՈՐԴՆԵՐԸ  
ԴԱՀՆԱԿցականներին հաւասարից-  
ՆՈՒՄ ԵՆ, որ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵԼ ԹՈՒՐՔ-  
ԻԱՅԻ ՄԻՋԵԼ պատերազմը շուտով  
ԱԿՈՒԵԼՈՒ Է: ՆՐԱՆՔ ասում էին, որ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՅ շուտով ապս-  
ՏԱՄԲՈՒԹԻՄ ԵՆ ԲԱՐՃՐԱԳՄՆԵՐՈՒ ԿՈՎ-  
ԿԱՍՈՄ ԲՆԱԿՈՒՈՂ ԹՈՒՐՔԵՐԸ, ՎՐԱ-  
ԳԻՆՆԵՐԸ ԵԼ լԵՊՆԱԿԱՆՆԵՐԸ: ԵՐԿԻՄ-  
ԹՈՒՐՔԵՐԸ ՃԳՈՒՄ ԷՒԽՆ ՀԱՄԱՆԵԼ այն  
բանին, որ ՀՅԴ-Ն ԹՈՒՐՔԻԱՅԻ օգ-  
տին քարոզչական աշխատանքներ  
տանի Պարսկաստանի ել կովկասի  
հայերի շրջանում ստեղծի կամա-  
ւրական ջոկատներ, իսկ երբ սկսուի  
պատերազմը, այդ կամաւրական  
խմբերով համալրի ոռումների դէմ  
կոռուող թուրքական բանակը: Բա-  
նակցութիւնների ժամանակ թուր-  
քական կողմը դաշնակների առջեւ  
դրեց մի քարտէզ, ըստ որի՝ Գան-  
ձակի նահանգի մի մասը, ողջ  
Դաղստանն ու Պաքուի նահանգը  
տրուելու էին կովկասի թուրքե-  
րին, Տրապիզոնի վիլայէթի, Պա-  
թումի շրջանի որոշ մասերը, Քու-  
թայիսի ու Թիֆլիսի նահանգնե-  
րը բաժին պիտի համնէին վրացի-  
ներին, իսկ Հայաստանին, որին  
նրանք խոստանում էին ինքնավա-  
րութիւն չնորհել, բաժին էր ընկ-  
նելու իրզըում մի վիլայէթի մի մա-  
սը, Կարսի շրջանը, Գանձակի նա-  
հանգի մի մասը, Պիթլիսի, Վանի  
վիլայէթները ու Երեւանի նահան-  
գը: Դաշնակցականները չընդունե-  
ցին Ռուսաստանի դէմ ապստամ-  
բութիւն բարճրացներու երիտթուր-  
քական պարագլուխ ների առա-  
ջարկը: ՀՅԴ ՏՐԴ համագումարում  
որոշում ընդունուեց, որ պատե-  
րազմի պայմաններում հայութիւնը  
թուրքական պետութեան նկատ-  
մամբ պէտք է մնար լոյալ վիճա-  
կում՝ կատարելով իր քաղաքացի-  
ական պարտականութիւնները: ՅԵՆ-  
ՌՈՒԵԼՈՎ այդ որոշման վրայ, դաշ-  
նակցութեան դեկավարութիւնը յայ-  
տարարեց, որ պատերազմի դէպ-  
քում թէ՛ Ռուսաստանում, թէ՛  
Թուրքիայում բնակուող եւ բանա-  
կային ծառայութեան ենթակայ հա-  
յերը չպէտք է խուսափեն կատարել  
իրենց քաղաքացիական պարտա-  
կանութիւնները այդ երկրների միմ-  
եանց դէմ պատերազմող բանակնե-  
րում: ԵՐԻՄԹՈՒՐՔԵՐԸ դաշնակնե-  
րի այդ պատամիսանը շատ բացա-  
սաբար ընդունեցին: ՀՅԴ-Ի ղեկա-  
վարութիւնը պատերազմում արեւմ-  
տահայութեան պատապրութեան  
լոյսը անվերապահօրէն կապում էր  
Անտանտի տէրութիւնների յաղ-  
թանակի հետ: Դաշնակցութեան  
«Հայրենիք» թերթը «Եւրոպական  
պատերազմ» յօդուածում Գերման-  
իայի եւ նրա դաշնակիցների դէմ  
Անտանտի պետութիւնների կող-  
մից մղուող պատերազմն անուա-  
նում էր սրբազան պատերազմ: 72  
ՀՅԴ-Ի ունականներու հայա-

ՀՅԻ-Ր զնկավարսերը հաւա-  
տացած էին, որ թուրքիայի դէմ  
պատերազմի նախապատրաստուող  
Անտանափի տէրութիւնները թուր-  
քերից կ'ազատագրէին հայկական  
վիլայէթները եւ գրանով հանդերձ՝  
հնարաւոր կը դառնալ անկախ  
Հայաստանի ստեղծումը. Դաշնակ-  
ցականներին ինքնավար Հայա-  
տան ստեղծելու խոստում էր տուել,  
օրինակ, Կովկասի փոխարքայ Վո-

## ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ

## Ծարութակուածէջ 13-էջ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայ մենչեւիկները առաջ էին  
քաշել «պատերազմ մինչեւ յաղ-  
թական աւարտ» կարգախօսը:  
Արեւմտահայութեան ազատազրու-  
թեան խնդիրը կապելով պատե-  
րազմում Անտանտի յաղթանակի  
հետ 74 նրանք համագործակցում  
էին հայկական ազգային բիւրոյի  
հետ եւ հայ ժողովրդին կոչ էին  
անում կանգնել Անտանտի կողքին:  
Մենչեւիկեան «Փայլակ» թերթը  
ուուսական բանակն անուանում էր  
ազատարար բանակ: 73

Անտանտի ջերմեռանդ պաշտպան էր Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութիւնը («Սպեցիֆիկներ»): 74

ჰაველის მოძღვანელობა და მის მიერ გადასახვა უკავშირდებოდა. ამ მოძღვანელობას უკავშირდებოდა და მის მიერ გადასახვა უკავშირდებოდა.

Ուսմկավարների տեսակշտռերն  
արտայացտող «Վան-Տոսպ» եւ  
«Ազգ» թերթերը նոյնակէս Անտան-  
տի կողմնակիցներն էին, Գերման-  
իային եւ նրա դաշնակիցներին  
պարտութեան մատնելու յոյզը հիմ-  
նականում կապում էին Ռուսաս-  
տանի հետ: «Վան Տոսպը» գրում  
էր, որ որքան էլ հայկական հար-  
ցում շահազգրգուռած լինեն ֆրան-  
սան եւ Անգլիան, այդուհանդերձ  
հայութեան պատապրութեան յոյ-  
սը պէտք էր հիմնականում կապել  
միացն ու միացն Ռուսաստանի  
հետ: 76

Հայ հասարակական-քաղաքական գործարար շրջանները ուղարկան բանակին ցոյց արուող իրենց աջակցութիւնը իրականացնում էին հիմնականում Նախիջեւանում, Ալեքսանդրապոլում, Երևանում եւ Պաքրում ստեղծուած ռազմաարդիւնաբերական կոմիտէների միջոցով, որոնց նպատակն էր բոլոր հնարաւոր միջոցներով օգնութիւն ցոյց տալ Ռուսաստանին: Պաքրու ռազմաարդիւնաբերական կոմիտէն գլխաւորում էր խոշոր հայ արդիւնաբերող Ա. Ղուկասովը, իսկ Թիֆլիսի գաւառացին կոմիտէն՝ Ա. Խատիսիեանը:

Այս երկու անձնաւորութիւնն-  
ները զգալի դեր էին խաղում ողջ  
Անդրկովկասի տարածքում գոր-  
ծող ռազմարդիւնաբերական կոմի-  
տէների արդիւնաւէտ եւ համա-  
կարգուած աշխատանքում:

Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովին պատրաստակամութիւն կը յայտնէ կազմակերպել հայկական կամաւորական ջոկատներ: Այդ նպատակով սկսեց գործել դեռեւ 1912 թ. ստեղծուած Հայկական ազգային բիւրոն: Իուսական իշխանութիւնները սկսեցին միջոցներ յատկացնել հայերին այդ գործը առաջ մղելու համար: Վորոնցով-Դաշկովի խորհրդով Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ֆրդը դիմեց Նիկոլայ Զրդ ցարին՝ հայ ժողովրդին պաշտպանելու խնդրանքով եւ հաւաստիացումներով, որ հայերը պատրաստ են բոլոր միջոցներով աջակցել ուստական բանակին: 77 Կաթողիկոսի դիմումը Վորոնցով-Դաշկովի միջոցով հասնում է Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Գորեմիկինին, որը կաթողիկոսին ուղղուած իր պատրաստանի մէջ նրան վատահեղնուած է, որ

ոռուսական կառավարութիւնը մտա-  
դիր է լուրջ ուշադրութիւն դարձ-  
նել արեւմտահայերի իննդիրնե-  
րին; Գորեմիկինի խոստումները  
ոգեւորեցին հայերին եւ ոռուսական  
բանակ զօրակիշուած հայերի թուա-  
քանակը հասաւ մինչեւ երկու հա-  
րիւր հազարի: Դա Ռուսաստանում  
բնակուող հայերի 13 տոկոսն էր  
կազմում: 80 Բացի դրանից զգալի  
քանակութեամբ հայեր հաւաքագր-  
ուել էին թիկունքային աշխա-  
տանքների համար:

Եւ այսպիսով, հայկական քաղաքական կուսակցութիւնները եւ հասարակական կազմակերպութիւններն ամփափիր, բոլոր միջոցներով աջակցում էին Անտանտի տէրութիւններին եւ զգալի դեր էին խաղում ինչպէս հայ կամաւորական ջոկատների կազմակերպման, այնպէս էլ ոռոսական բանակին ցոյց տրուող օգնութեան գործում:

յութեան ամենանուիրական իղձն էր: Դրա համար հազարաւոր հայոցդիներ պատրաստ էին իրենց կեանքը զոհաբերել: Այդ նպատակով աշխարհով մէկ ափուուած հազարաւոր հայեր, համոզուած, որ Արեւմտեան Հայաստանի ազատագրումը հասրաւոր է միայն ռուսական գէնքի միջոցով, մեծաքանակ խմբերով գալիս էին Ռուսաստան եւ պատրաստակածութիւն էին յայտնում ամէն կերպ նպաստել ռուսական բանակի յաջողութիւններին: 1915 թ. ԱՄՆ-ից, Ռումինիայից, Բուլղարիայից եւ այլ երկրներից եկած հայեր մտնում էին կամաւորական ջոկատների մէջ: Ռուսական պետութեանը մատուցած ծառայութեան դիմաց ռուսական ցար Նիկոլայ Զրդը խոստանում էր թուրքիացի տիրապետութեան տակ գտնուող հայկական տարածքների վրայ ստեղծել ինքնավար Հայաստան: Ալ, Խատիսեանը եւ Մեսրոպ Արքեալիսկոպոսը այդ մասին տեղեկացնում են ազգային բիւրոցին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Եղիշին:

Առաջին աշխարհամարտի սկզբին պատերազմին հայերի մասնակցութեան վերաբերեալ հայկական շրջաններում գոյութիւն ունէր երկու մօտեցում։ Մի մասը գտնում էր, որ հայերը պարտաւոր են իրենց պարտքը կատարել միայն ուղևական բանակում։ Հրաժարուելով յատուկ հայկական կամաւորական ջոկատներ ստեղծելու գաղափարից, իսկ միւս մասը այն տեսակէտին էր, որ պէտք է ստեղծուէին նաեւ հայկական կամաւորական ջոկատներ։ Յաղթեց կամաւորական ջոկատներ կազմելու տեսակտը եւ սկսուեց դրանց կազմաւորման գործընթացը։ Այդ ջոկատների առջեւ դրուեցին բազմաթիւ իննդիրներ։ Բաւականին լաւ իմանալով տեղանքը, հայ կամաւորները ոչ միայն պէտք լինէին ուղևական բանակի ուղեկցորդներ, ասւեւ թէնամբու ու էջ աետքէ

սեր, այլու թշնամու դէմ պէտքէ  
ինքնուրոցն զորձէին այն տեղե-  
րում, որտեղ բանակի զործողու-  
թիւնները զանազան պատճառնե-  
րով աննպատակացարմար կը լինէ-  
ին։ Ազգ ժամանակ զոյութիւն ու-  
նէր այն տեսակէտը, որ հայ կամա-  
ւորականների թուաքանակը պէտք  
է համեմ մինչեւ 15 հազարի,  
որպէսզի յետագայում ոռուական  
բանակը ազատուեր պատերազմի  
ընթացքում թուրքերից ազատազր-  
ուած շրջաններում կարգ ու կանոն

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հաստատելու հոգսերից, եւ այդ  
հոգսերն իրենց վրայ պէտքէ վերց-  
նէին հայ կամաւորները։ ԱՄՆի  
Անգլիացի, Ֆրանսացի եւ այլ երկր-  
ների առանձին դիւանազիտական  
շրջանակները այն կարծիքին էին,  
որ կամաւորական շարժումը կը  
բարձրացնի հայերի հեղինակու-  
թիւնը մեծ տէրութիւնների աշ-  
քում եւ որքան հզօր լինի կամա-  
ւորական շարժումը, այնքան աւելի  
քիչ խոչընդուներ կը լինեն հայ-  
կական հարցի լուծման ճանապար-  
հին։ 1914 թ. Օգոստոսին կովկաս-  
եան բանակի հրամանատարութեան  
մասնակցութեամբ ձեւաւորուեցին  
չորս կամաւորական ջոկատներ։  
Ռուսական կառավարութիւնը այդ  
ջոկատներին յատկացրեց որոշակի  
գումար՝ հագուստի եւ մննդի հա-  
մար։ Ջոկատները ենթարկուեցին  
ռազմաճակատի ընհանուր հրամա-  
նատարութեանը, իսկ դրանց հրա-  
մանատարներ նշանակուեցին հա-  
յեր։

լացքուն զասաւորսարը յարձակ-  
ման գծի առաջին շարքերում էին,  
իսկ նահանջի ժամանակ յետնա-  
պահ էին։ Կամաւորների ռազմա-  
կան սիրանքները արժանանառում  
էին ռուսական բանակի բարձրաս-  
տիճան զինուորականների բարձր  
գնահատականին։ Կովկասեան բա-  
նակի առաջին կորպուսի հրամա-  
նատարն իր հաշուետութեան մէջ  
նշում էր, որ առաջին իսկ յարձա-  
կողական մարտերի ժամանակ հայ  
կամաւորները զգալի յաջորդութիւն-  
ների են հասել եւ արժանացել են  
ռուսական բանակի հրամանտա-  
ռութեան ոռուատան թիւն։ 78

զրութեան զրուատանքին; Ծամայն հայութեան ուշադրութիւնը կեղրոնացուած էր Արեւմտեան Հայաստանի, արեւմտահայութեան ճակատագրի վրայց; 1914 թ. Նոյեմբերի 8ին հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեանցը վորոնցով՝ Դաշկովիլին ուղղած նամակում խնդրում էր, որ ցարը հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանում ապրող հայերի ծանրվիճակը եւ նրանց նույիրուածութիւնը Ռուսաստանին, թուրքա-

կան լծից ազատագրուելու յետոց  
նրանց տայ ինքնավարութիւն։ Կա-  
թողիկոսի նամակում գրուած էր.  
«Ներկայումս, երբ ողջ Ռուսա-  
տանի եւ յաղթական ռուսական  
զօրքի հետ հայերը պէտք է ծացը  
աստիճանի լարեն իրենց ջանքերը  
ընդհանուր թշնամու դէմ մղուող  
պայքարում, ես այժմեան պատմա-  
կան պահի հետ լիովին համապա-  
տասխան եմ գտնում կայսրի անու-  
նից թուրքահայերին ուղղուած կոչ  
հրապարակել, հայ ժողովրդին  
ներշնչել, որ այժմ հնչել է Թուրք-  
իայի հայերի դրութեան հարցի  
վերջնական եւ անդառնալի որոշ-  
ման ժամը եւ որ հայ ժողովրդին  
թուրքահայաստանի Յվիլայէթնե-  
րի (Վանի, Էրզրումի, Պիթլիսի,  
Սուազի, Տիարբեքիրի եւ Խարբեր-  
դի) եւ իր անբաժան մասի Կիլիկ-  
իայի հետ, որպէս մէկ օրգանական  
ամբողջականութեան սահմանե-  
րում մէծ Ռուսաստանից պէտք է  
ինքնավարութիւն ընծայուի, որով  
լրումն կ'առնի թուրքերի լծի տակ  
գտն ուղղ քրիստոնեայ ժողովուրդ-  
ների ազատագրման նրա պատմա-  
կան առաքելութիւնը...»։ 79

1914 թ. Նոյեմբերի կէսերին յայտնի դարձաւ, որ ցարը մտադիր է մեկնել Թիֆլիս եւ այցելել կովկասեան ճակատ։ Դրանից առաջ բազմաթիւ անգամ հարց էր բարձրացուել, որ կաթողիկոսը այցելի Սանկտ-Պետերբուրգ, որպէսզի ցարից երաշխիքներ ստանայ հայկական հարցի լուծման համար եւ ահա կաթողիկոսի համար յարձար առիթ է ստեղծուած այդ երաշխիքները ցարից ստանալու համար։ Ստեղծուած է յատուկ յանձնաժողով, որը պէտք է նախապատրաստէր Ռուսաստանի հովանաւորութեամբ հայկական ինքնավարութիւնը ստեղծելու ինդրագիրը։ Կաթողիկոսը մեկնուած է Թիֆլիս, որի քաղաքագլուխ Ա. Խատիսեանը զբաղուած էր ցարի եւ կաթողիկոսի հանդիպութը կազմակերպէլու գործով։ Ցարը Թիֆլիս է ժամանուած 1914 թ. Նոյեմբերի 26ին։ 1914 թ. Նոյեմբերի 29ին տեղի է նունենուած Նիկոլայ Բ.ի եւ կաթողիկոսի հանդիպութը։ Հայ հասարակութեան ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ընթացքուած կաթողիկոսը յայտնուած է, որ Նիկոլայ Բ.ը իրեն լսելուց յետոց, վստահ էցրել է, որ հայութեան բոլոր սպասելիքները կ'իրականանան։

71. Յարութիւնեան Ա., Առաջին  
համաշխարհային պատերազմի  
ռազմադիւճանազիտական պատմու-  
թիւնից (1914-1918), Երևան, «Հա-  
յաստան», 1983 թ., էջ 245:

72. «Հայրենիք» 26-ը Ապրիլի 1915  
թ.:

73. «Բանուոր», 2-ը Յուլիսի,  
1917:

74. «Փայլակ», 1916, N11

75. «Հորիզոնն», 27-ը Նոյեմբեր,  
1914

76. «Վան-Տուապ», 28-ը Օգոս-

76. «Կամ-Յուպ», 20-ր օկտոբերի 1916:

77. Նոյն տեղում:
78. Կարապէտեան Մ., Հայկական կամ կամաւորական խմբերը եւ ազգային գումարտակները կովկասեան ու ազմանակատում, Երեւան, «զիտուրին», Էջ 90:
79. Հայերից եղասպանութիւնը Օսմանեայ կայսրութեան: Փաստարդերի եւ նիւթերի ժողովածու Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ: Երեւան, «Հայաստան», 1991, Էջ 334:



## ՅԱՅՏԱԳԻՐԸ

Դ. ԿՈՐԻՒՆ

Արդարեւ չմերժելով բարեկամիս առաջարկը ներկայ գտնուեցի հանդիսութեանը: Հրաւէրը 27 Նոյեմբերի իրիկապահի 5:30ի համար էր, երբ մուտք գործեցինք սրահը, արդէն դրսում մութ գիշեր էր, իսկ առանց չափազանցելու պէտք է ասել որ ճիշտ ու ճիշտ ցերեկ՝ լուսաւելեղով ողողուած սրահ, այս մէկը շատ լաւ է, որ ամէն ինչ գեղեցիկ է երեւում լուսաշաղախ լոյսերի ներքոց: Թող հրաշագեղ ստեղծարար էդիսոնի հոգին յաւերժ խաղաղ ու երջանիկ կեանք վայելի դրախտավին օթեւաններում, որ իր գիւտով անձենելի ծառայութիւն մատուցեց մարդկութեան խաւարի դէմ լոյս ափուելով:

Եթէ չսիսալուեմ մի 25 սեղաններ շարուած էին սրահում, որոնցից հազիւ քասանի շուրջ հիւրեր էին տեղաւորուած, մնացածները բերանները բաց ապասում էին հիւրերի, մի քանիսը դատապարտուեցին հէնց կարօտ վիճակում մնալ: Պէտք է ասել, որ հօր լոյսերի շողերի ներքոյ ամէն ինչ փայլում էր, եթէ սովոր չէր, նա փայլում էր որպէս սովոր, աղամանդ չէր, նա փայլում էր որպէս աղամանդ, թիթեն էլ փայլում էր որպէս աղամանդ: Պէտք է ամուսնութիւնը քանի որ հարսանիք, մկրտութեան հանդէս կած ամուսնութեան տարեղարձ չէր, անպայման ունենալու էր յայտագիր: Յայտագիրը ընդհանրապէս սրահը ներս մտնելիս յանձնում են մարդու ձեռքը, կամ դնում են աթոռի վրայ, սակայն այս անգամ գոնչ ինձ համար, որ հանդէսներին քիչ եմ հրաւիրում հարուստ շինուալս պատճառաւ, (այս մէկը մաքուր սրտով եւ հաւատացած եմ ասում՝ երանի ես էլ դրամ շատ ունենալի, որ բարի դրածերի համար սրտաբուխ նուիրէի եւ օգտակար լինէի) նորութիւն էր, որ յայտագիրը դրել էին դեսերտի պնակի կողքին դանակ պատառաքղի տակ, որ յանկարծ թեւ չառնի եւ փախչի, քանի որ հանդիսութեան ընութիւնը մի յայտա-

գիր էր, փոխանակ հայերէնով գրուէր, լրիւ օտար լեզուով էր, դրանով հանդերձ որ հայկական հանդէս էր եւ մի տասից պակաս օտար պատուարժան հիւրեր կային, որոնց համար կարելի էր քովինները թարգմանէին:

Ճիշտն ասած ես բան չհամացաց այդ յայտագրից եւ չկարողացաց ծրագրին հետեւել, հանդիսութեան ամբողջ ընթացքից էլ ազնիւ խօսք եմ ասում, բան չհամացաց: Եթէ նախապէս տեղեկացուէր ծրագրի ամբողջ ընթացքը օտար լեզուով է, ձշմարիսն եմ ասում չպիտի ներկայ լինէի, որովհետեւ անգլերէն իմացութիւնս տկար է: Մեծապէս համոզուած եմ, որ անգլերէն լեզուն տարածուած է, ասելով չէ, այլ գործնականի մէջ էլ այդպէս է, որովհետեւ այդ նշանակում է մերինը՝ դարաւորն ու կատարեալը այդ պիտի սովորական վայրերում մոռանանք եւ հապարտանանք, որ այլ լեզուով կարողանում ենք խօսել, լեզու իմանալը շատ լաւ է, անշուշտ բոլոր կենդանի լեզուները իմ մօտ յարգի են անխտիր, օտար լեզու իմանալը անձնական հարց է, իսկ ազգային պահանջը այլ:

Այդ հանդիսութեան գեղարուեստական բաժինը կարծ եւ համեստ էր, այս պարապաններում անհարժեշտ է աւելի ճոխ ծրագրով՝ ազգային երգ, պար, ամսունք ունենալ գրաւելու եւ ազդեցութիւն թողնելու համար:

\*\*\*

Պատմում են թէ երբ Տիգրան Պետրոսեանը շախմատի ախոյեան դարձաւ աշխարհում սովետի ժամանակ, նրան արտօնուեց ճամբորդութիւնները կատարել տարրեր երկրները: Ասում են՝ նրան սուլեկցողները նաեւ այլ ազգից էին: Նա ուր որ լինում էր, ինչպէս միջին արեւելեան, երոպական եւ արեւմտեան երկրներում իրեն դիմաւորողները խօսում էին Մեծն Շախմատիստի լեզուով, նրան մեծապէս յարգում, պատում եւ պարծենում էին նրա ախոյեանութեամբ: Նրա ուղեկցողը անձինք զարմացել էին, անհամբեր

հարց են տալիս Գորածայստերին.

- Ընկեր Պետրոսեան դու միթէ՞ քանի լեզու ես իմանում, որ ուր գնում ենք ազդ երկրի ժողովրդի լեզուով ես խօսում:

փոքրերին, արդէն տեսմում ենք, թէ ինչպէս տնում, փողոցում եւ դպրոցում օտար լեզուով են խօսում: \*\*\*

Կիրակնօրեայ հայերէն դասընթացքի եկեղեցւոյ սրահումն էի գտնում, մի գեղեցկատեսիլ հայ օրիորդ էր պարապում՝ մանր ու մոռնը՝ երեխանների եւ պատանինների հետ: Տեսնեմ՝ օրիորդը փոքրերին տեղափոխելիս եւ խօսելիս օտար լեզուով է ասում, անհանգիստ վիճակից հարց տուի:

- Օրիորդ ջան, մատաղ քեզ, այս երեխանները միթէ՞ հայ չեն.

- Ինչու չէ, հայ են, ինչո՞ւ ես օտար լեզուով խօսում:

- Օտար լեզուի են վարժուած.


- Ինչպէս թէ սուար լեզուի են վարժուած. հայերէն խօսիր, որ հայերէնի վարժուեն, նրանց ծնողները բերել են քո մօտ, որ հայերէն սովորեցնես, ոչ թէ սուար լեզու:

Ամերիկան ազատ երկիր է եւ որեւէ մշակոյթ եւ կրօն արգելուած չէ, ոչ ոք քեզ չի ստիպում կամ արգելք չի վնում, որ քո լեզուն, կրօնը եւ սովորութիւնները չպահեստ չեն:

Երբ նուիրուածութիւն լինի, սէր ու կոչում լինի, նախանձախնդրութիւն եւ եռանդ լինի, ամէն ինչ կարգին իր տեղումը կը լինի:

Ո՞վ պիտի այդպէս լինի:

Խնդրում եմ, խորը մտածենք:



## Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance  
by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans  
by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation  
by Employers Compensation Insurance Company

**Call now and let me help take the worry out of your health care!**

## HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent

1807 W GLENDALE BLVD. #202

GLENDALE, CA 91201

(818) 502-3233

HARUT@EXCELYE.COM

WWW.EXCELYE.COM

CA Insurance

License #OB28270



The Power of Blue.<sup>SM</sup>

## ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսարուժութեան կեդրոն  
ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ  
Արթին Սաղրեանի  
Փաստինայի մէջ  
Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն  
մինչեւ կ.թ. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104  
Հեռախոս (818) 434-8118  
միայն ժամանակութեամբ

»Միտք մարմնի վրայ« թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.  
-Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերննշում, շաբարախտ, ազմա, եւալն: -Մոլութիւններ - սիկարէք, ալֆոլ, թմրադեղեր, եւալն: -Հոգեկան տագնապահներ - անձնկութիւն, վախչի, քանի որ հանդիսութեան ընութիւնին խորթ մի յայտա-

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՉԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ծարութակուածէք 6-Էն

Րաֆֆի կը բացատրէ պատճառը. «Թուրքը, ասորճանակը, վահանը եւ նիզակը քիւրտի մարմնի անդամներն են: Զին քիւրտի ընկերն է: Քիւրտը իր ձին աւելի կը սիրէ քան իր կինը, երեխաները»: Րաֆֆի կը շարունակէ.

«Քիւրտը հովիւ է: Տուն չունի: Իր օթեւանը իր վրանն է: Զմեռնային ձիւները միայն կրնան քիւրտը քշել իր սիրելի սարերէն: Այն ժամանակ հայու մը տունը միշտ պատրաստ է ընդունելու ինքնակոչ հիւրին: Այստեղ քիւրտը իր անասուններուն հետ կ'անցնէ ամբողջ ձմեռը, մինչեւ որ գարունը զայն կրկին կանչէ դէպի լեռներուն գիրկը»: (ընդգծումները ինձնէ, Ա.Չ.: Րաֆֆի, Երկերի ժողովածու, Հտ. 4, Կայծեր, Ա., Երեւան, 1963, էջ 360-363):

Թուրքիոց արեւելեան նահանգներուն մէջ հայ գեղջուկին զլիստոր պատուհասը, թուրքերէն աւելի, քիւրտերն էին: Այդ էր պատճառը որ հայ գեղջուկը դարերով ողբացած է իր ճակատագիրը, երգելով իր սրտի խորերէն.

Պարզիր, աղբիւր, քրոի տղին ջուր տանեն,

Պարզիր, պարզիր, բեկի տղին ջուր տանեն

Աղբիւր, գիտե՞ս, թիւրտը մեզի հ'օչ կ'անէ.

Կը կողոպտէ, կը հալածէ, կը սպաննէ:

Աչքս բացի՝ սուգ ու շիւան ես սեսայ,

Նամերդ թիւրդին, ո՞հ, զոհ գնաց իմ փեսայ:

Կար ժամանակ, որ մենք ազատ կ'ապրէինք,

Մեր սեփական թագաւորնենր ունեինք:

Գահ ու փառքից, ազատ կեանք քրոկուեցինք,

Արիւնարու թշնամու ձեռք մատնուեցինք:

Աղբիւր, իիմա սեւն է պատեր մեր աշխարհ,

Զուլում, զուլում, զարդու սարսափ ու խաւար:

Դէի, շուտ պարզիր, բեկի տղին ջուր տանեն,

Պարզիր, պարզիր, Խան Մուրադին ջուր տանեն:

Անդրանիկ ըսած էր. «10 ֆետայի 200 թուրք զինուորի դէմ շատ աւելի դիւրին կը կոռուի, քան 10 ֆետային 10 քիւրտի դէմ: Զինուորը, դուրսէն եկած եւ շրջանին անծանօթ, հրամանի կը սպասէ որպէսպի քայլ մը առնէ: Քիւրտը, շրջանի ամէն մէկ քարին, դարին ու ծառին ծանօթ, այծեամի պէս կը սուրայ աչ ու ձախ»:

Խրիմեան Հայրիկի նախաձեռնած մարդամարէն ի յայտ կուգայ, թէ՝ 1000 թուականին 6,000,000ի հասնող հայ ազգաբնակչութիւնը մօտ 900 տարիներ ետք, մինչեւ 1881 թ., ոչ միայն չէր աւելցած, այլ կէսէն աւելի պակած էր:

Արդեօք 1880-81 թ. 2,660,000 հաշուող հայութիւնը ի՞նչ վիճակ կը պարզէր 1915 թ. եւ որքա՞ն գոհ տուած Մեծ Եղենին: Պիտի ընկմ

մօտաւոր հաշիւ մը, որովհետեւ ծշպրիտ վիճակագրութեան մը համար տուեալինք կը պակսին:

1880 թ. մինչեւ 1915, 35 տարիներու ժամանակամիջոց մը, հայութիւնը տուած 300,000 զոհ Համիտեան ջարդերուն, մօտ 10,000 զոհ Սամոյ Ա. եւ Բ. «ապստամբութիւններուն» (1894 եւ 1904 թթ.), առաւել 30,000 զոհ Աստանայի կոսորածին (1909): Ընդամէնը՝ 340,000 զոհ: Մեծենոյն ժամանակամիջոցին 2,660,000 հայութեան աճը կրնար մօտաւորապէս հաւասարած ըլլալ զոհերու թիւին: Այնպէս որ, մինչեւ 1915 Ապրիլ 24, հայութեան թիւը կրնար մնացած ըլլալ, միշտ մօտաւոր հաշիւներով, միեւնոյնը. այսինքն՝ 2,660,000:

Որքա՞ն էր արդեօք վերապրողներուն թիւը մինչեւ 1920 թ. Մարաշի վերջին աղէտը (1920 Յունուար-Փետրուար) եւ երկրորդ արտապղթը կիլիկիայէն:

Մեծ Եղենի տարիներուն կ. Պոլսոյ եւ իզմիրի հայութիւնը շարդ չտեսաւ, մինչեւ իզմիրի հրկիզումը քեմալականներուն կողմէ 1922 Սեպտեմբեր 21ին: Այս երկու քաղաքները մօտ ըլլալով եւրոպակի, թուրքերը զգուշացան հոն ջարդ կազմակերպէլէ: Անոնց կարգը շատ հաւասար պիտի զար պատերազմի վերջաւորութեան, եթէ երբեք թուրքերը յաղթական դուրս ելլէին պատերազմէն: 1915 Ապրիլ 24էն առաջ կ. Պոլսոյ մէջ կ'ապրէին 150,000 հայեր, իսկ իզմիրի հայ ազգաբնակ-

չութեան թիւն էր 30,000: Այս երկու գաւառներուն հայութիւնն ալ հաշուելով, կարելի է ըսել թէ թուրքիոյ արեւմտեան ծովեգերեաց շրջաններուն մէջ հայ վերապրոցներուն թիւն էր շուրջ 300,000:

Թուրքիոյ արեւելեան սահմանամերձ գաւառներէն մօտ 350,000 հայեր կրցած էին ապաստան գտնել Անդրկովկասի գիւղ ու քաղաքներուն մէջ:

Սուրբոյ անապատները վերապրած հայերուն ընդհանուր թիւը կարելի է համարել շուրջ 150,000 (ոմանք շուրջ 200,000 էր հաշուեն այս թիւը): Դաշնակիցները՝ Անգլիա եւ Ֆրանս, իրենց սեփական փոխարածմիջոցներով զանոնք տարին կիլիկիա եւ տեղաւորեցին Ատանա, Անթապ, Մարաշ եւ գիւղերը, որովհետեւ, Սուրբիան, Լիբանանն ու Կիլիկիան Ֆրանսայի բաժին ինկած էր որպէս պատերազմի աւար..., Սայքս-Փիփո համաձայնութեամբ (Մայիս 16, 1916):

Ուրեմն, Մեծ Եղենին վերապրողներուն ընդհանուր թիւը, թուրքիոյ արեւմտեան, արեւելեան եւ հարաւի սահմաններուն վրայ եղած էր շուրջ 800,000: Իսկ զալով զոհերուն, 2,660,000 նուազ 800,000, հաւասար է 1,860,000, ինչ որ եղած ըլլալու է Մեծ Եղենի նահաստակներուն թիւը, միշտ մօտաւոր հաշիւով: Այս թիւը հաւասաբար աւելի մօտ է իրականութեան, քան «մէկ ու կէս միլոն»ի ենթադրութիւնը:

**Massis Weekly on the Internet**

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

updated every Friday

COME IN AND  
ENJOY  
OUR PATIO  
AND THE  
FINEST  
SHISHA  
“HOOKAH”

**CATERING FOR ALL OCCASION**



*Wahib's*  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN LEBANESE FOOD



MOUHAMAD SALEM  
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641

FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY  
FRIDAY ~ & ~ SATURDAY  
NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION



**BELLY~DANCING**

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՒԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍ ԲԱՆԱՉՈՒԵՑ ԼԵՒՈՆ ՊԱՀԱԶԵԱՆԸ

2007թ. ֆուտպոլի Հայաստանի բարձրագոյն խմբի լաւագոյն ֆուտպոլիստ ճանաչուեց Երեւանի «Փիւնիկի» եւ Հայաստանի հաւաքականի աջ կիսապաշտպան Լեւոն Պաչաջեանը: Նախորդ տարիների համեմատ լաւագոյն ֆուտպոլիստի կոչման համար պայքարն այս անգամ աչքի ընկաւ աննախադէպ թէժ մրցակցութեամբ: Լեւոն Փաչաջեանի օգտին գրանցուել է 137 միաւոր: Փաչաջեանն ընդամէնը մէկ միաւորով առաջ անցաւ իր թիժակից, ազգային հաւաքականի պաշտպան Ռոբերտ Արգումանեանից: «Փիւնիկի» եւ պազային հաւաքականի աւագ Մարգիս Յովսէփեանը 135 միաւորով եղրափակել է լաւագոյն ֆուտպոլիստների եռեակը:



Հայաստանի լաւագոյն ֆուտպոլիստի հարցմանը մասնակցել էին ԶԼՄ-ների ներկայացուցիչները, բարձրագոյն խմբի ակումբների գլխաւոր մարզիչները, նախագահները, մրցավարները եւ տեսուչները:

Մրցանակաբաշխութեան ժամանակ պարզեւատրուեցին Հայաստանի ախոյեան «Փիւնիկը», որը նման պատուի էր արժանանում 7-րդ տարին անընդմէջ, փոխախոյեան «Բանանցը», պրոնզէ մետալակիր «Միկան», առաջին խմբի յաղթող «Փյունիկ-2»-ը: Առաջին անգամ պարզեւատրուեց նաեւ ֆուտպոլի ախոյեան «Պոլիտեխնիկը»:

Լաւագոյն ուժբարկուի պարզեւն էլ յանձնուեց «Արարատում» հանդէս եղող Մարկոս Պիզելիին, սակայն նա Հայաստանում չէր, եւ մրցանակը տրուեց «Արարատ» ակումբի ներկայացուցչին: Մարկոսը արժանացաւ նաեւ «Պորֆիուտքոլի» կողմից սահմանած «Ամենաարդիւնաւէտ ֆուտպոլիստ» կոչմանը: Այստեղ հաշուի էր առնուել ոչ միայն նրա խփած գոլերի քանակը, այլև գոլային փոխանցումները:

### ԲՈՆՑՔԱՎԱՐՏ ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՅԱՍԻ 25--ՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Շուեցարական Բագել քաղաքում IBF-ի վարկանիշով միջին քաշային կարգում աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամը վեցերորդ անգամ անընդմէջ յաջողութեամբ պահպանեց ախոյեանի տիտղոսը: Հայ պրոֆեսիոնալ բոնցքամարտիկը տեխնիկական նոկառուտով առաւելութեան հասաւ անգլիացի Ուեյն էլքորի նկատմամբ:

Թէեւ հանդիպումից առաջ որոշ բուժքերական գրասենեակներ նախապատութիւնը տալիս էին Աբրահամի մրցակցին, սակայն մրցամարտի սկզբնամասում Արթուրը տիրեց նախաձեռնութեանը եւ արդէն երկրորդ ռառնդում էլքորին նոկառունի:

Հինգերորդ ռառնդում Աբրահամը եւս մէկ անգամ նոկառունի ենթարկեց մրցակցին եւ մրցավարը կանգնեցրեց մրցամարտը՝ արձանագրելով Արթուրի յաղթանակը:

«Ասոշիէթըդ փրես»-ը յիշեցնում է, որ Աբրահամը անցկացրել է 25 հանդիպում եւ բոլոր մենամարտերում յաղթել է:



### ՀԱՅ ՔԱՐԱԹԻՍՏՆԵՐԻ ՀԱՐՈՒՏ ԱՒԱՐԸ

Վարշառուայում անցկացուած քարաթէի եւրոպայի գաւաթի խաղարկութիւնում յաջող մրցելութիւնը ունեցան հայ քարաթէիստները: Մարզական մեր պատուիրակութիւնը, որ գլխաւորում էր Հայաստանի աւանդական քարաթէի ազգային ֆեդերացիայի նախագահ եւ հաւաքականի գլխաւոր մարզիչ Գրիգոր Միքայէլեանը, նուածեց 4 ոսկէ եւ 3 արծաթէ մետալ: Մրցաշարին մասնակցում էին 11 երկրների ներկայացուցիչներ:

Մինչեւ 15-17 տարեկանների մրցավէճում մեր հանրապետութեան մարզական պատիւը բարձր պահէց Հայկ Թունեանը, որը յաղթելով մրցակիցներին, կանգնեց պատուոյ պատուանդանի առաջին աստիճանին: Տարիքային այս խմբում արծաթէ մետալի արժանացաւ Յարութիւն Խաչատրեանը:

68 կգ քաշային կարգում իր հաւասարը չունեցաւ Դաւիթ Ռոկանեանը, որն ուժեղ էր մրցակիցներից եւ արժանիօրէն նուածեց յաղթողի կոչումը: Նրա յաղթարշաւը շարունակեցին նաեւ Հրաշեալ Վարժապետեանը (80 կգ) եւ Տիգրան Մուրադեանը (80 կգ-ից բարձր): Քաշային այդ կարգերում Հայաստանին մէկական արծաթէ մետալ պարզեւեցին Արա Գասպարեանը (80 կգ) եւ Վազգէն Յարութիւնեանը (80 կգ-ից բարձր):

**ՔԱՅ ՆԱԶԱՐ ՈՒՂԻԴ ԵԹԵՐ ՀՕ**  
**Ամէն Կիրակի Երեկոյեան**  
**Ժամը 10:00-ից 12:00**  
**Կլէնտէլի 26-րդ կայանից**

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

#### ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

|                         |     |                                 |     |
|-------------------------|-----|---------------------------------|-----|
| Եվրոթըն - Ֆուլհամ       | 3-0 | Թոթենհամ - Մանչեսթըր Ս.         | 2-1 |
| Պլեյպուր - Ուէսթ Համ    | 0-1 | Ուտինկ - Լիվըրփուլ              | 3-1 |
| Չելսի - Սանտըրլենտ      | 2-0 | Պոլըրն - Ուէկան Աթ.             | 4-1 |
| Ասթոն Վիլլա - Փորթամուր | 1-3 | Մանչեսթըր Եուն. - Տերպի Քառումի | 4-1 |
| Միտըլզպորո - Արտենալ    | 2-1 | Նիւքսըլ - Պըրմինկիեն            | 2-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

|                 |    |    |   |   |       |    |
|-----------------|----|----|---|---|-------|----|
| Արտենալ         | 16 | 11 | 4 | 1 | 33-14 | 37 |
| Մանչեսթըր Եուն. | 16 | 11 | 3 | 2 | 29-8  | 36 |
| Չելսի           | 16 | 10 | 4 | 2 | 24-9  | 34 |
| Լիվըրփուլ       | 15 | 8  | 6 | 1 | 27-9  | 30 |
| Փորթամուր       | 16 | 8  | 6 | 2 | 28-14 | 30 |
| Մանչեսթըր Սիթի  | 16 | 9  | 3 | 4 | 20-16 | 30 |
| Եվրոթըն         | 16 | 8  | 3 | 5 | 27-19 | 27 |

#### ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

|                            |     |                             |     |
|----------------------------|-----|-----------------------------|-----|
| Նիւքենպուրկ - Շերբա Պերլին | 2-1 | ՎՖԼ Պոխում - Բարլսրուիէ     | 2-2 |
| Պ. Լիվըրփուլզըն - Ռուբոր   | 3-0 | Շանովըր-96 - Վարտըր Պրեյմըն | 4-3 |
| Վին. Ֆրանքֆորդ - Շալք-04   | 2-2 | Շամպուրկ - Բորպիւս          | 0-0 |
| Շբուրկարթ - Վուլսպուրկ     | 3-1 | Պ. Միւնիխ - Տուիզպուրկ      | 0-0 |
| Շորմունտ - Արմ. Պիլզէլւ    | 6-1 |                             |     |

Առաջատար խումբերու դասաւորումը

|                 |    |    |   |   |       |    |
|-----------------|----|----|---|---|-------|----|
| Պայերն Սիւնիխ   | 16 | 10 | 5 | 1 | 31-8  | 35 |
| Վարտըր-Պրեյմըն  | 16 | 10 | 3 | 3 | 37-22 | 33 |
| Շամպուրկ        | 16 | 9  | 4 | 3 | 23-12 | 31 |
| Պ. Լիվըրփուլզըն | 16 | 9  | 3 | 4 | 30-11 | 30 |
| Շանովըր-96      | 16 | 8  | 3 | 5 | 26-23 | 27 |
| Բարլսրուիէ      | 16 | 8  | 3 | 5 | 18-20 | 27 |
| Շալք-04         | 16 | 6  | 8 | 2 | 24-16 | 26 |

#### ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

|                       |     |                        |     |
|-----------------------|-----|------------------------|-----|
| ճենովա - Սիենա        | 1-3 | Էնփոլի - Բալիարի       | 4-1 |
| Նափոլի - Փարմա        | 1-0 | Ինթէր Միլան - Թորինօ   | 4-0 |
| Ուեճինա - Ա. Ա. Միլան | 2-0 | Եուվեներուս - Արալանքա | 1-0 |
| Լացիո - Բարանիա</td   |     |                        |     |



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ  
Proud Past



Լուսաշող Ապագայ  
Exciting Future

AGBU HYE GEEN

*Presents*

MIREILLE KALFAYAN'S BOOK  
**"AS A WOMAN SAW IT"**

Collection of Articles

Presenters:

PROF OSHEEN KESHISHIAN  
and MS. CECILE KESHISHIAN

SATURDAY, DECEMBER 15, 2007 - 11:00 AM

AGBU ALEX MANOOGIAN CENTER  
2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

RSVP: agbuhyegeen@gmail.com or by calling (626) 794-7942

AGBU Ardavazit Theatre Company Presents

AGBU Manoogian Armenian School Drama Conservatory

**RUMORS**  
BY NEIL SIMON

Saturday, December 15th 2007, 8:00 PM  
Alex Manoogian Center Auditorium  
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104



Starring: Armanel Krikorian, Gina Shmuelian, Patrick Chumashian, Nairi Sablani, Andrew Suriano, Jennifer Torkian, Alen Margakian, Ani Ermenakian, Colette Toronian, Melikha Saracyan, Merrin Pogosyan.

Donations: \$ 15

For Tickets & Information Call AGBU MDS (818)883-2428 AGBU Pasadena (626)794-7942

AGBU PASADENA CHAPTER

*Presents*



ADULTS  
CELEBRATION  
GYMNASIUM SEATING  
DONATION \$100

TEEN'S  
CELEBRATION  
IN "BOYAJIAN HALL"  
DONATION \$65

KIDS 12 & UNDER  
CELEBRATION  
IN "BIG TENT"  
DONATION \$30